ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 58 (24611), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲٤٦۱۱) ۵۸ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ՀԻՆԳՇԱԲԹԻ

14 ՄԱՐՏԻ 2024

آلیک

پنجشنبه – ۲۴ اسفند ۱۴۰۲

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

Իրանի քարտէզագրման կազմակերպութիւնը բողոքարկել է ՄԱԿ-ի անփոյթ մօտեցումը

ՊԱՐՍԻՑ ԾՈՑ ԱՆՒԱՆՈՒՄԸ՝ ԿԱՐԵԼԻ Է ՉԱՓԵԼ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՔՈՎ ՄԻԱՅՆ

«ԱԼԻՔ» - Իրանի «Գէոդեզիայի եւ քարտէզագրութեան» կազմակերպութիւնը բողոք է ներկայացրել ՄԱԿ-ի աշխարհագրական անուանումների փորձագէտների խմբի կողմից Պարսից ծոցի անունը խեղաթիւրելու վերաբերեալ:

Հարկ է նշել, որ կատարուածն առաջինը չէ իր տեսակով: Քաղաքակրթութեան պատմութեան հետ իր անցեալով ու վաղեմութեամբ չափւող ՊԱՐՍԻՑ ԾՈՑ տեղանունը պաշտօնական հարթակում կեղծելն անուշադիր կեցուածքի արդիւնք ու վրիպակ չես գնահատի: Եթէ, մինչեւ ՄԱԿ-ի պաշտօնական հարթակներում նման քայլերի ականատես լինելը, քաղաքական լրահոսից չկտրուած լսարանին անկարեւոր թւացող քարտէզներում շարունակւում էր նման դէպքերի կրկնութիւնը, ապա այսօր դրանք կրելով քաղաքական ենթատեքստ, օգտագործւում են աշխարհագրական փոփոխութիւնների նկրտումներ հետապնդող ծրագրերում նաեւ: Օրինակները քիչ չեն, յատկապէս մեր տարածաշրջանում:

Աւելորդ կը լինէր տողատակերում նշելը, որ օրակարգ մտցնելու փորձեր են արւում՝ տարօրինակ միջանցքների ու պատմականօրէն հիմնաւորում չունեցող աշխարհագրական անունների տարածումը, կամ ինչպէս այս դէպքում է Պարսից ծոցի անուանումի փոխարինումը ՄԱԿ-ի պաշտօնական հրապարակումներում՝ կեղծ տարբերակով:

(Շար. 8-րդ էջում)



ԻՆՔՆԵՐԳՈՒԹԻՒՆ



Ինձ ասում են բախտաւոր ես, ով անբախտ,
Իրաւ, կեանքս եւ դժոխք էր, եւ դրախտ...
Մանուկ էի, բայց մանկութիւն չտեսայ,
Հայր էլ եղայ, որդու կարօտ մնացի,
Ծով ծարաւով ոչ մի աղբիւր չհասայ,
Զուլալ եղայ պղտորուելով գնացի:
Դեռ էն գլխից հազար տեղով խոցուեցի,
Ձեան վրայ էլ ոտաբոբիկ ման եկայ,
Թէ յոյսերի բաց դուռ էի, գոցուեցի,
Կարօտ մնաց սէրս մի սուրբ աղջկայ...
Դեռ ասում են բախտաւոր ես ու մէկ-մէկ
Անուններն են տալիս լացող երգերիս,
Երնէկ տալիս, մինչ բուրւառը սրտիս հէգ
Մոխրամանն է դեռ մխացող վէրքերիս...
Ու մինչ օրս ոտաբոբիկ եմ կարծես,
Թւում է, թէ նորեն ձիւն կայ ոտիս տակ,
Միշտ ման եկայ մօրը կորցրած գառի պէս,
Թէ բախտը կար ինչո՞ւ թողեց ինձ մենակ:
Բայց վէրքերս կարմիր վարդեր թւացին,
Բոժոժի պէս մեռայ, որ ձեզ մետաքս տամ,
Ջահել սրտիս տակից փախաւ սիրուն ձին,
Հազար փախած ունիմ, որի՞ն ես ման գամ:
Էլ ո՞ւմ գրկում երջանիկ եմ, էլ ինչո՞վ,
Երբ վիրաւոր մի առիւծի մռնչով
Ձագս կորցրած դեղ կփնտրեմ, բայց խաբում,
Անբալասան բախտը վերքս չի կապում:
Չէ, ասում են, բախտաւոր ես, ով անբախտ,
Իրաւ, կեանքս եւ դժոխք էր, եւ դրախտ,
Ա՜խ, չգիտեմ ո՞ւմս է մեղքը, որ լացի,
Զուլալ եկայ պղտորուելով գնացի...
Աւա՜ղ, ձեր մէջ ես ո՞նց զուլալ մնայի,
Ես անգին քար, գոհար ու լալ մնայի,
Գոհարին վար, քարերին վեր տարաք դուք,
Քար սրտերում ո՞նց մնայի ես մանուկ:

Մարտի 14-ը Հայրենիքի, հայոց վշտի ու կարօտի անզուգական քնարերգու, հայ մեծանուն բանաստեղծ Յովհաննէս Շիրազի (1914-1984) յիշատակի օրն է

Իրանը եւս երկու ատոմակայան է կառուցում

«ԱԼԻՔ» - Իրանի Ատոմական էներգիայի կազմակերպութեան ղեկավարը յայտարարել է, որ էլեկտրակայանների կառուցման համար կը պահանջւի մօտ 7 տարի եւ յոյս յայտնեց, որ մինչեւ 14-րդ շրջանի կառավարութեան (յաջորդ կառավարութեան) աւարտը երկրում կը կառուցւի հազար մեգավատ հզօրութեամբ երկու ատոմակայան:

Parstoday.ir-ի համաձայն՝ կառավարութեան անդամների հետ հանդիպման ժամանակ, Մոհամմադ Էսլամին ասել է. «Նանօ ատոմային էլեկտրակայանների միջազգային ատոմիացիան Իրանի հարաւում գտնւող Բուշեհրի ատոմակայանը ներառել է գնահատման աղիւսակի վերեւում, քանի որ այն շատ լաւ է աշխատել»:

Էսլամին նշել է. «Իրանում առաջին անգամ կիրականացւի գիւղատնտեսական մթերքների ճառագայթում, եւ յոյս ունենք, որ դա դրական կազդի մարդկանց կեանքի վրայ»:

Սննդի եւ գիւղմթերքի ճառագայթումը հնարաւորութիւն է տալիս կանխել դրանց փչացումը, ոչնչացնել սննդի միջոցով փոխանցւող պաթոգէնները, ինչպիսիք են բակտերիաները եւ վերացնել վնասատու միջատների ազդեցութիւնը՝ առանց էականօրէն ազդելու սննդի համի կամ հոտի վրայ:

Արթուր Խաչատրեան.

«Եթէ Տաւուշի հատուածից զիջումներ արւեն, Հայաստանի ամբողջ հիւսիս-արեւելքը խոցելի է լինելու»

(Տես 8-րդ էջում)

Վիլիամ Սարոյեանը՝ Յովհաննէս Շիրազի մասին.

«Շիրազ մեծ տաղանդ մըն է: Անիկա մեծ, մեծ անուն ունի եւ մենք շատ կը գնահատենք անոր գոյութիւն... Շիրազ թանկագին հոգի մըն է, ես շատ կը ցանկանամ լուրեր առնել անոր գրութիւններէ, լսել անոնք: Ան տաղանդ է, մենք պէտք է հպարտ զգանք եւ մեծ պատիւ համարենք անոր հետ ծանօթ ըլլալ»

ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام
սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Ստանիսլաւ Տարասով.

«Բրիտանական հետախուզութիւնը «մեծ խաղի» մէջ է մտնում Հայաստանում»

Երբ Նիկոլ Փաշինեանը յայտարարեց ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցութեան սառեցման մասին եւ դա բացատրեց, իբր չեն կատարուել նրա պայմանները Երեւանի նկատմամբ, յատկապէս 2021-2022-ին, ապա Հայաստանի անվտանգութեան ծառայութեան գեներալի կոչումով նախկին բարձրաստիճան ղեկավարներից մէկը հեղինակիս ասաց.

«Հիմա սպասէք Հայաստանում Մեծ Բրիտանիայի քաղաքական բեմ դուրս գալուն»:

Նա ելնում էր ռուսական փորձագիտական շրջանակներում տարածուած վարկածից, որ հէնց «բրիտանական հետախուզութիւնն է իրականացրել Փաշինեանի իշխանութեան առաջխաղացման նախագիծը»: Նրա խօսքով՝ այդ ծրագիրը բաղկացած էր մի քանի փուլից. Հայաստանի բանակի նախապատրաստումն Ադրբեջանի հետ առաջիկայ պատերազմում պարտութեան, այդ ֆոնին Ռուսաստանի քաղաքական վարկաբեկում, ՀԱՊԿ-ից դուրս գալ եւ Գիւմրիում ռուսական ռազմակայանի վերացում, Եւրասիական տնտեսական միութեան ձեւաչափով Ռուսաստանի հետ առեւտրատնտեսական կապերի խզում: Գեներալը նաեւ պնդում էր՝ Ադրբեջանն իրազեկուած է եղել Լոնդոնի «Փաշինեան» գործողութեան իրականացմանը, որի հետագայ մանրամասները կազմակերպել են բրիտանական MI6 հետախուզական ծառայութեան ղեկավար Ռիչարդ Մուրի 2022 թ. վերջին Երեւան կատարած այցի ժամանակ՝ արդէն դարաբաղեան երկրորդ պատերազմում պարտուած Հայաստան: Վերջինս նախկինում Թուրքիայում դեսպան էր: Այդ իսկ պատճառով ենթադրւում էր, որ նա կարող է միջնորդի դերում հանդէս գալ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ յարաբերութիւնների կարգաւորման գործում: Բայց նոյնիսկ այդ դէպքում հայ հետախոյզի «դաւադրութեան վարկածը» դժւարութեամբ էր հաւատալի թւում, թէեւ Բաքւի համաձայնութիւնը Երեւանի հետ խաղաղութեան բանակցութիւնները՝ Մոսկւայից Բրիւսէլ կամ Վաշինգտոն տեղափոխելու վերաբերեալ, շատ հարցեր էին առաջացնում:

Առաւել եւս, որ առաջին պլան մղեց Հայաստանի ռազմատեխնիկական համագործակցութիւնը Ֆրանսիայի եւ Հնդկաստանի հետ: Սակայն հիմա իրավիճակը սկսում է կերպարանափոխուել:

Այստեղ բեմադրուած բնութագրով շատ սիւժէներ կան: Միացեալ Թագաւորութեան պաշտպանութեան փոխնախարար Ջէյմս Հիպպին, պատգամաւոր Ռոբերտ Բաքլենդի հարցմանը գրաւոր պատասխանում, որը յայտնել է անգլիական ԶԼՄ-ներում, յայտարարել է Մեծ Բրիտանիայի պաշտպանական արդիւնաբերութեան համար պոտենցիալ շահի մասին, եթէ Հայաստանը դուրս գայ ՀԱՊԿ-ից, եւ «Բրիտանիան պատրաստ է աջակցութիւն ցուցաբերել Ռուսաստանից բխող սպառնալիքների դէպքում»: Ինտրիգն այստեղ այն է, որ այժմ Հայաստանը յայտարարում է Ադրբեջանի կողմից սպառնալիքի մասին՝ կապած՝ ինչպէս խաղաղութեան պայմանագրի ստորագրման ձախողման, այնպէս էլ՝ Հայաստանի հետ սահմանազատման եւ սահմանագծման բանակցութիւնների գործընթացի խափանումից յետոյ Ադրբեջանի կողմից Հայաստանի նկատմամբ նոր տարածքային պահանջների ի յայտ գալու հետ:

Հիպպիի վարկածով, եթէ Ադրբեջանը որոշի եւս մէկ ուժային սցենարի դիմել, ապա «նրա թիկունքում կանգնած կը լինի ոչ թէ Թուրքիան, այլ Ռուսաստանը»: Այստեղ կան կարեւոր նրբերանգներ. եթէ Բաքուն պատերազմ սկսի Երեւանի դէմ, ապա այն նրա համար եւս յաջող կը լինի թէկուզ այն պատճառով, որ Հայաստանն արգելափակել է ՀԱՊԿ-ի միջամտութիւնը: Դրանից յետոյ ուժի մէջ կը մտնի «անգլիական նաւերը չեն կարող բարձրանալ Տաւրոսի լեռները» դարաւոր բրիտանական ասացուածքը. փոխարէնը՝ կարող է գործել հետախուզութիւնը:

Այնուհետեւ Լոնդոնը Բաքւին եւ Երեւանին, առանց Մոսկւայի մասնակցութեան, դուրս կը բերի դէպի Թուրքիա ելք ունեցող «Զանգեզուրի միջանցք»-ի բացման խնդրի լուծմանը՝ կարծես աւարտելով Հայաստանը եւրոպական կառոյցներ ներքաշելու իր գործողութեան տարրերից մէկը: Լոնդոնեան ԶԼՄ-ների տեւալներով՝ այս նախագծի իրականացման ուղղութեամբ այժմ ինտենսիւ աշխատում է Երեւանում բրիտանական դեսպանատունը: Նշւում է՝ արդէն պատրաստ է «Զանգեզուրի միջանցք»-ը Թուրքիայի եւ Ադրբեջանի ձեւական վերահսկողութեան տակ անցնելու նախագիծը, իսկ դէ ֆակտո՝ բրիտանական հետախուզութեան MI6–ին: Ի դէպ, արդեօք այս հանգամանքով չե՞ն պայմանաւորուած Երեւանի յայտարարութիւնները՝ «Զւարթնոց» օդանաւակայանից եւ Մեղրիի հատուածից ռուս սահմանապահներին արտաքսելու անյետաձգելի անհրաժեշտութեան մասին: Ահա թէ ինչու Ռուսաստանի ԱԳՆ ներկայացուցիչները նշել են՝ «ուշադրութեամբ են վերաբերւում Հիպպիի խօսքերին», որոնք, իրենց կարծիքով, «հաստատում են արեւմտեան երկրների ձգտումը՝ Հայաստանն օգտագործել յետխորհրդային տարածքում, մասնաւորապէս, Հարաւային Կովկասում իրենց շահերն առաջ մղելու համար»: Եւ ոչ միայն դա: Մոսկւան նաեւ կարծում է, որ լայն համատեքստում «Արեւմուտքը մտադիր է Հայաստանը դարձնել իր գործիքը Մոսկւայի հետ հակամարտութեան մէջ» «գլոբալ Բրիտանիայի» ֆոնին՝ ի դէմս վերածնւող Բարձր Դռան»:

Այս ամէնն Անդրկովկասում սկսող «մեծ խաղի» տարրերն են՝ Լոնդոնի մասնակցութեամբ: Բրիտանացիներն արդէն եղել են այս տարածաշրջանում օկուպացիոն զօրքերի կարգավիճակով 1918-1919-ականների սկզբին: 1921 թ. մարտի 16-ին Անգլիայի զանձապետարանի կանցլեր Ռոբերտ Հորնը եւ ՌՍՖՍՀ արտաքին առեւտրի կոմիսար Լէոնիդ Կրասինը ստորագրեցին առեւտրային համաձայնագիր: Այս դիւանագիտական փաստաթուղթը սովորական առեւտրային փաստաթուղթ չէ՝ երկու երկրների միջեւ առեւտրային գործառնութիւնները կարգաւորելու պարզ նպատակով: Դա քաղաքական-առեւտրային բնոյթի համաձայնագիր էր, որն Անդրկովկասում «սանձազերծում էր Վլադիմիր Լենինի կառավարութեան ձեռքերը»: Հետաքրքիր է՝ ինչ կը լինի այս անգամ, եթէ Լոնդոնում իշխանութեան գայ լէյբորիստական կառավարութիւնը:

iarex.ru

Բենիամին Մատթէոսեան.

«Նիկոլ Փաշինեանի կարեւոր ու վտանգաւոր յայտարարութիւնները»

(Քանի՞ քառակուսի կիլոմետր կը փոքրանայ Հայաստանը Փաշինեանի յաջորդ ասուլիսից առաջ)

Քաղաքագէտ Բենիամին Մատթէոսեանը Alpha News-ի եթերում «Վերնագիր» հեղինակային հաղորդման ընթացքում ներկայացրել է թեմայի շուրջ մասնագիտական վերլուծութիւն, որում մասնաւորապէս ասում է.

Աւելի քան երեք ժամ տեւած ասուլիսի ընթացքում Նիկոլ Փաշինեանը հաւցրեց պատասխանել տասնեակ հարցերի: Պատասխաններում կային բազմաթիւ փաստական անճշտութիւններ եւ քաղաքական մանիպուլիացիաներ, սակայն առանձնացրել ենք Փաշինեանի խօսքերից ամենագլխաւորը.

1. Եթէ նախկինում Նիկոլ Փաշինեանը եւ իր թիմի անդամներն ասում էին, որ «իրենց համար կարմիր գիծը Հայաստանի տարածքն է 29800 քառակուսի կմ.-ի սահմաններում», ապա այսօր Փաշինեանը յայտարարեց, որ Հայաստանի տարածքը իրականում 29743 քառ. է: Այսպիսով, մայրաքաղաքի կենտրոնում՝ ՀՀ կառավարութեան շէնքում, առանց Ադրբեջանի ռազմական յարձակման, Փաշինեանը մէկ յայտարարութեամբ կրճատեց Հայաստանի տարածքը՝ ոտնատակ տալով իր իսկ ստեղծած «կարմիր գիծը»:

2. Նիկոլ Փաշինեանը յայտարարեց Տաւուշի մարզում Ադրբեջանին մի շարք տարածքներ մօտալուտ ժամանակներում յանձնելու մասին: Կրկին կիրառւեց մանիպուլիատիւ տեխնիկա, եւ ասաց, որ «Հայաստանը չի պատրաստւում յանձնել Տաւուշի մարզում գտնւող բնակավայրերը», բայց միեւնոյն ժամանակ նշեց, որ Հայաստանը նախատեսում է կառուցել ճանապարհների նոր հատուածներ՝ փոխարինելու ճանապարհների սահմաններից դուրս գտնւող հատուածները:

«Հայաստանը պատրաստւում է վերակառուցել Խորհրդային Հայաստանի սահմանից դուրս եկող ճանապարհների հատուածը:

Անընդունելի ու անհեթեթ խօսակցութիւն է, որ Տաւուշի մարզից որեւէ բնակավայր կարող է յանձնել: Մենք չենք վերցնում քարտէզը ու որեւէ բան կտրում, այլ ճշգրիտ տեսնում ենք՝ Տաւուշում կան ճանապարհներ, մասնաւորապէս՝ Ոսկեպար գիւղի հատուածում, որ մի կտոր դէ-իւրէ հատում է ՀՀ տարածքի գիծը ու նորից մտնում ՀՀ տարածք: Նախկինում քննարկումների ժամանակ ֆոն կար, որ կարող է այնտեղ որտեղ ճանապարհ կայ, պահենք այդ հատուածը, գնանք համարժէք չափով տանք, բայց եկել եմ այն եզրակացութեան, որ պէտք չէ այդպէս անել: Դա լրացուցիչ անորոշութիւն է ստեղծում: Փոքր մի քանի կտոր կայ, պէտք է գնալ, այդ ճանապարհները, որոնք դուրս են գալիս Հայաստանի խորհրդային հանրապետութիւնից, վերակառուցել»,- նշել է նա:

Բացայայտելով Փաշինեանի յայտարարութեան էութիւնը՝ գալիս ենք մի տրամաբանական եզրակացութեան՝ Նիկոլ Փաշինեանն այսօր բացայայտ խոստովանեց, որ Հայաստան-Վրաստան աւտոճանապարհի հատուածները յանձնելու է Ադրբեջանի վերահսկողութեանը: Այն երթուղին, որով անցնում է նաեւ Հայաստան-Վրաստան գազատարը:

Աւելին, այս տարածքների յանձնումը կը վնասի Տաւուշի մարզի տարիների ընթացքում կառուցած պաշտպանական բնագիծը: Այդ գիծը, որն, ըստ բազմաթիւ ռազմական փորձագէտների, ամենապատրաստուածն է հակառակորդին դիմակայելու համար: Եւ այս պաշտպանութեան գծում միանգամայն միտումնաւոր բաց է ստեղծւում:

3. Փաշինեանը հնարաւոր է համարել Բաքւի հետ խաղաղութեան պայմանագրի կնքման դէպքում հայցերի յետկանչը:

«Բանակցութիւնների ընթացքում այդպիսի հարց քննարկւել է եւ քննարկւում է»,- այս մասին նշեց Նիկոլ Փաշինեանը՝ պատասխանելով հարցին, թէ արդեօք Հայաստանի իշխանութիւնների օրակարգում կայ միջազգային ատեաններում ընդդէմ Ադրբեջանի գանգատներից հրաժարւելու հարց:

«Մեր դիրքորոշումը հետեւեալն է. դա մի հարց է, որը կարող է քննարկւել ամենավերջում, երբ ըստ էութեան, խաղաղութեան պայմանագրի դրոյթներն արդէն իսկ համաձայնեցւած կը լինեն եւ ակնյայտ կը լինի, որ կողմերը պատրաստ են դա ստորագրել: Դա տրամաբանական է, որովհետեւ եթէ կողմերը գալիս են համաձայնութեան եւ հասնում են ստորագրման փուլին, ես չեմ բացառում եւ նոյնիսկ տրամաբանական կը համարեմ երկուստեք նաեւ նման լուծման գնալը»,- ասաց նա:

Յիշէք, որ երբ Հայաստանը վաւերացրեց Հռոմի ստատուտը, պետական պաշտօնեաներն ասում էին, որ դա արւում է հէնց Ադրբեջանի վրայ կան պաշտօնեաներն ասում էին, որ դա արւում է հէնց Ադրբեջանի վրայ լծակներ ունենալու, միջազգային ասպարէզում նրան պատասխանատուութեան ենթարկելու համար, իսկ հիմա բացայայտ ասում են, որ պահանջները յետ են կանչւելու:

Սա իր հերթին նշանակում է, որ իրաւացի էին բոլոր այն փորձագէտներն ու քաղաքական գործիչները, որոնք յայտարարեցին՝ Հռոմի ստատուտի վաւերացումը զուտ քաղաքական ակտ էր, որի նպատակն է ցոյց տալ Փաշինեանի արեւմտեան գործընկերներին՝ Հայաստանն այլեւս Ռուսաստանի դաշնակիցը չէ, որ Հայաստանը պատրաստ է գործողութիւններ իրականացնել անգամ ՌԴ ղեկավարութեան դէմ: Փաշինեանն այս թէզը հաստատեց իր յայտարարութեամբ, որ երկիրը պատրաստ է յետ կանչել Ադրբեջանի նկատմամբ հայցերը:

4. Եւ մինչ ՀԱՊԿ-ը «Հայաստանի քաղաքական առաջնորդներին սթափութեան կոչ է անում», Նիկոլ Փաշինեանն իր ասուլիսի ժամանակ ոչ միայն ուրւագծեց Կազմակերպութիւնից դուրս գալու Հանրապետութեան ցանկութիւնը, այլեւ առաջ է քաշել հետեւեալ թէզը՝ «Հայաստանի բոլոր դժբախտութիւնների մեղաւորը Ռուսաստանն է եւ ռուսական գործօնը»:

Ըստ Փաշինեանի

• Ռուսաստանը չօգնեց 1915 թւականի Ցեղասպանութեան ժամանակ

• Ռուսաստանը հրահրեց 2020 թւականի պատերազմը, եւ ընդհանրապէս «դարաբաղեան խնդիրը ստեղծեց Հայաստանի վրայ լծակներ ունենալու համար»

• Ռուսաստանը փորձեց իշխանափոխութիւն կատարել Հայաստանում 2020 թւականի նոյեմբերի 9-ից յետոյ

• Ռուսաստանի Դաշնութեան իշխանափոխութեան վերջին փորձը եղել է 2023 թւականի սեպտեմբերին, երբ ամէն ինչ արւեց, որ Արցախը կործանւի, իսկ Հայաստան եկող արցախցին իշխանափոխութիւն իրականացնի եւ այլն:

(Շար. 7-րդ էջում)

Լիլիթ Գալստեան.

«Սա միայն կոնսերւատորիայի խնդիրը չէ. իրականում, ազգային կրթական համակարգի հակառակորդները Երկրի եւ հայ մարդու բովանդակութիւնն են աղճատում»

Սա միայն կոնսերւատորիայի խնդիրը չէ: Թոյլ մի տւէք, որ մեզ առանձին-առանձին պարտութեան մատնեն: Այս մասին գրել է ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամ, ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լիլիթ Գալստեանը:

«Քանդել ամէն բան, յետոյ յայտարարել, թէ քննարկելու ենք:

Սա ձեռագիր է, պատւէր է, դաւադիր յանձնառութիւն է՝ քանդել, անապատացնել ժառանգութիւն եւ անցեալի հետ հոգեւոր կապեր, ինքնութենական կոդեր:

ԵՊՀ, Կոնսերւատորիա, Բժշկական՝ սրանք կոդային, գաղափարական խորհուրդներ/ՍԻՄՎՈԼՆԵՐ են, սոսկ շէնք չեն...

0-ական կէտը սեւեռուն գաղափար է սրանց համար...

Զարմանալիօրէն եւ նաեւ հասկանալիօրէն բոլոր քանդիչ, սկանդալային ծրագրերը ԿԳՄՍ-ից են ելնում: Սա ծրագրային-տեսանելի եւ ուղորդւող ձեռագիր է:

Օրերս հրապարակւած, այսպէս կոչւած ԲՈՒՀ-ական կրթութեան 5 ուղղութիւնները եւ բաշխումները բազմաթիւ հարցեր են առաջացնում:

Էս քանդող, կազմալուծող երկրում ի՞նչ Ակադեմիական քաղաք. մեր անվտանգային կոլապսի մէջ սա ի՞նչ չհիմնաւորւած ծախս է, ի՞նչ առաջնահերթութիւն է...

Որտե՞ղ է որոշւել, թէ Հայաստանին Ակադեմիական քաղաք է հարկաւոր: Ի՞նչ հաշւարկներ, ի՞նչ ուսումնասիրութիւն, ի՞նչ հիմնաւորում կամ ռազմավարութիւն է ընկած այդ գաղափարի տակ:

Թղթի վրայ ինչ-որ հայեցակարգ. ովքե՞ր են այդ հայեցակարգ գրողները, ո՞ւմ պատւէրն է. չկայ հանրային պատւէր:

Կարո՞ղ էք՝ կրթութեան որակ ու մրցունակութիւն ապահովէք:

(Շար. 8-րդ էջում)

Դասագիրքը կացնի հարւած է մեր հազարամեայ պատմութեան արմատներին

Հայոց պատմութիւնը վերափոխել ու Հայաստանի պատմութիւն դարձնելու փորձը եւս մէկ ապացոյց է, որ Հայաստանի ներկայիս իշխանութիւնը Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ վերստին բարեկամանալ է փորձում, եւ այս ամէնը նրանց պահանջները իրականութիւն դարձնելու եւս մէկ փորձ է, որով կը մերժւի մեր հազարամեայ պատմութիւնը:

Yerkir.am-ը թեմայի շուրջ զրուցել է «Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրութեան կենտրոն»-ի տնօրէն, հայագէտ Հայկազուն Ալլրցեանի հետ:



– Պարոն Ալլրցեան, ո՞ւր կը տանի վերոնշեալ որոշումը:

– Այդ որոշմամբ կը խեղաթիւրւի Հայոց պատմութիւնը: Այս դասագիրքը կացնի հարւած է մեր հազարամեայ պատմութեան արմատներին, որովհետեւ վերոնշեալ դասագիրքն ամէն նախադրեալ ստեղծում է հետագայում բազմաթիւ պատմական կարեւորագոյն սկզբունքային հարցերից հրաժարւելու համար, օրինակ՝ հայոց բնիկութեան գաղափարից, որը տեւալ դասագրքում դրւում է հարցականի տակ, մեր մշակութային հնագոյն արժէքներից, Հայ Դատից՝ Արեւմտեան Հայաստանի, Կարսի, Արցախի եւ Նախիջեւանի հայկականութիւնից: Արդէն իսկ պաշտօնական մակարդակում ժխտւում է մեր ազգային հիմնական խորհրդանշանի՝ Արարատ լեռան հայկականութիւնը: Այս ամէնն ուղղակիօրէն ճանապարհ է հարթում Հայոց Ցեղասպանութեան ուրացման համար:

– Ինչ հետեւանքներ կունենայ այս ընթացքը հայ ժողովրդի ապագայի կամ, ինչպէս ընդունւած է ասել, հայկական շարունակականութեան վրայ:

– Թուրքերը Արցախը խլեցին ռազմական ճանապարհով՝ Հայաստանում իշխանութեան բերելով հայ ազգի թշնամի ուժերի: Սակայն նրանց հայաջինջ քաղաքականութեան ճանապարհին դեռ կանգուն է հայ ժողովրդի հզօր պաշտպանական ամրոց՝ հայ ժողովրդի պատմական յիշողութիւնը: Հայոց պատմութեան նենգափոխումով թշնամին ահա այդ ամրոցն է ուզում խորտակել: Իսկ դա անհնար է, քանի դեռ դպրոցում հայ աշակերտները սովորում են ճշմարիտ Հայոց պատմութիւնը: Հայոց պատմութեան նենգափոխմամբ փորձ է արւում մահացու հարւած հասցնել հայ մարդու պատմական յիշողութիւնը՝ նրան վերածելով մանկուրտի:

– Իսկ ի՞նչ կը տայ այդ կործանարար ընթացքին վարչապետի նախածեռնութիւնը՝ վերանւանել «Հայոց պատմութիւնը»:

– Երբ դասագրքի վերաբերեալ մտաւորականները, հասարակական-քաղաքական գործիչներն արտայայտեցին բացասական վերաբերմունք, իսկ հեղինակաւոր պատմաբանները համոզիչ հիմնաւորումներով փաստեցին դասագիրք յորջորջւած այդ շարադրանք վտանգաւորութիւնը, վարչապետ կոչեցեալը փորձեց պառակտել ձեւաւորւած ժխտողական միասնականութիւնը: Լաւ իմանալով, որ դասագիրքը մերժողները ամէն ինչում հակադրւելու են իր որեւէ առաջարկի, ասպարէզ նետեց «Հայոց պատմութիւնը» «Հայաստանի պատմութիւն» վերանւանելու առաջարկը: Ցաւօք այն ունեցաւ որոշ արդիւնք. շատերը, տրւելով այդ սադրանքին, սկսեցին տեւալ համատեքստում հերքել, նոյնիսկ ծաղրել Հայաստան բառը: Բարեբախտաբար այն լուրջ հետեւանքներ չունեցաւ:

– Ինչպէ՞ս կարելի է այս ամէնը կանխել:

– Եթէ տեւալ իշխանութեան վարած քաղաքականութիւնը սպառնում է պետութեան գոյութեանը, ապա իշխանութեան փոփոխութեան որեւէ մեթոդ չի բացառւում, քանզի եթէ ազգի գոյութեան ոչնչացման վտանգ կայ, ապա նրա գոյութեան իրաւունքից աւելի բարձր իրաւունք չկայ:

Հայաստանը՝ աշխարհաքաղաքական ու ռեգիոնալ փոթորկի կիզակէտում. ՀՀ-ին ՌԴ-ից ու Իրանից կտրելու գործին միացաւ Մեծ Բրիտանիան

ՀՀ իշխանութիւնների՝ դէպի Արեւմուտք արտաքին քաղաքական շրջադարձի փորձի հետեւանքով ՀՀ-ն եւ Հարաւային Կովկասը յայտնւել են աշխարհաքաղաքական ծանր փոթորկի կիզակէտում՝ աշխարհաքաղաքական գրեթէ բոլոր խաղացողների ակտիւ մասնակցութեամբ: Խօսքը Ռուսաստանի Դաշնութեան, Միացեալ Նահանգների, ԵՄ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Թուրքիայի եւ Իրանի մասին է: Եւ սա՝ մի փուլում, երբ ՀՀ-ի դէմ պատերազմն աւարտւած չէ, աւելին, ըստ որոշ գնահատականների, Հայաստանը գտնւում է նոր պատերազմի շեմին, երբ պատրաստւում է, այսպէս կոչւած, Խաղաղութեան համաձայնագիր ստորագրել Ադրբեջանի հետ, որն էլ զուգորդւում է Ադրբեջանի, ինչպէս նաեւ՝ Թուրքիայի կողմից ամենօրեայ սպառնալիքներով եւ ՀՀ-ից նոր տարածքային զիջումների պահանջներով:

Մինչ ՀՀ իշխանութիւնները փորձում են քիչ-քիչ մօտենալ ՀՀ տարբեր տեղանքներում տեղակայւած ռուսական կոնտինգենտին երկրից հանելու գործին, դրան լծելով նաեւ սեփական քարոզիչներին, փուլ առ փուլ փորձելով ռուսական կողմի արձագանգը եւ սրա սահմանները, ՀՀ արտաքին քաղաքական փոփոխութեան վերաբերեալ ուշագրաւ ուղերձներ են հնչում Իրանից, Մեծ Բրիտանիայից եւ այլ կենտրոններից:

Ինչպէս եւ կարելի էր սպասել, յատկապէս ակտիւ է Իրանը, որն այլեւս բաց յայտարարութիւններ է անում եւ հասկացնում, որ Ռուսաստանի փոխարէն՝ ինքը կարող է ստանձնել ՀՀ անվտանգութեան երաշխաւորի դերակատարութիւնը, այլապէս տարածաշրջանից դուրս անվրտանգութեան փնտրտուքը հակառակ արդիւնքի է յանգեցնելու՝ տարածաշրջանը վերածելով ուժերի բախման կէտի եւ աւելի շատ մարտահրաւէրներ է ստեղծելու տարածաշրջանային խաղաղութեան եւ կայունութեան համար:

Հարկ է նշել, որ անվտանգային նման ցածր մակարդակ ունեցող երկիրն արտաքին քաղաքական թիւ մէկ գործընկերոջը փոխելու գործընթացի մէջ է մտել՝ առանց Արեւմուտքից յստակ երաշխիքներ ունենալու:

Չէզո՞ք, թէ՞ ԵՄ անդամ երկրի կարգավիճակ է ունենալու ՀՀ-ն, յայտնի չէ որեւէ մէկին: Այնուամենայնիւ ԵՄ անդամակցութեան կուրսի որդեգրման դէպքում նոյնիսկ այն լինելու է երկարատեւ եւ ձգձգւած գործընթաց, ինչը ենթադրում է ՀՀ-ի շուրջ աշխարհաքաղաքական ցնցումների շարունակականութիւն:

Օրերս թուրքական TRT-ին տւած հարցազրոյցում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյեանը արտաքին քաղաքականութեան կողմնորոշման վերաբերեալ նշել էր, որ Հայաստանում ակտիւօրէն քննարկւում են առկայ նոր հնարաւորութիւնները:

«Գաղտնիք չեմ բացայայտնի, եթէ ասեմ, որ այդ շարքում է նաեւ Եւրոմիութեանն անդամակցութեան գաղափարը»,- յայտարարել էր նա:

Ուշագրաւ է, որ այս ամէնն ակտիւ փուլ մտաւ Մունիխէնի Անվտանգային կոնֆերանսից յետոյ, որի շրջանակում, ինչպէս յայտնի է, Նիկոլ Փաշինեանը հանդիպել էր նաեւ MI6-ի ղեկավար Ռիչարդ Մուրի հետ: Եւ հետաքրքրական է, որ յայտարարութիւններ է սկսել անել նաեւ Մեծ Բրիտանիան: ՄԹ զինւած ուժերի նախարար Ջեյմս Հիպպին նշել է, որ Մեծ Բրիտանիան ընդունում է ՀԱՊԿ-ին անդամակցութիւնը սառեցնելու Հայաստանի որոշումը՝ որպէս այդ երկրի ինքնիշխան իրաւունք, եւ աշխատելու է Եւրոատլանտեան դաշնակիցների հետ՝ աջակցելու Երեւանին ռուսական պատասխան սպառնալիքների դէպքում: Նա նշել էր, որ Հայաստանը սառեցրել է իր անդամակցութիւնը Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեանը՝ յայտարարելով, որ Ռուսաստանը չի կատարել Հայաստանի նկատմամբ անվտանգային իր պարտաւորութիւնները, միաժամանակ բրիտանացի պաշտօնեան նկատել էր, որ սա դեռ չի նշանակում կազմակերպութիւնից պաշտօնական դուրս գալ:

«Միացեալ Թագաւորութիւնը ստորագրել է ԵԱՀԿ սպառազինութիւնների էմբարգոն, եւ, որպէս այդպիսին,

(Շար. 6-րդ էջում)

Դերենիկ Մելիքեանի ոսպնեակից

ՈՏՔԻ՛ ԱՐՑԱԽ ՈՏՔԻ՛ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՏՔԻ՛ ՍՓԻՒՌՔ...

Դ. Մ.
Պատմական գիտութիւնների թեկնածու



Անցնող տասնօրեակը իրաւամբ բնութագրելի է որպէս արեւմտա-անգլոսաքսոնական քաղաքական անբարոյութեան ու մասնաւորապէս դիւանագիտական պոռնկութեան դրսեւորման հերթական ցուցանիշ...

1. Թուրքիայի արտգործնախարար Ֆիդանի եւ իր ամերիկացի գործընկեր Բլինքէնի հանդիպման աւարտին յայտարարւում է, որ երկուստեք յանձնառութիւն են ընդունել Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղութիւնը կարգաւորելու գործում: Մինչ այդ էլ թուրք նախարարը հանդիպել էր Սպիտակ տան ազգային անվտանգութեան հարցերով խորհրդական Սալիւանին, որի հետ եւս քննարկել էր նոյն՝ հայ-ադրբեջանական հաշտութեան գործընթացի օրակարգը:

2. Միաժամանակ, Հարաւային Կովկասի հարցերով Եւրոմիութեան յատուկ ներկայացուցիչ Տոյւօ Կլաարը նախորդ շաբաթ Անթալիայում կայացած դիւանագիտական ֆորումում յայտարարում է, որ «Թուրքիան կարող է օգտակար լինել տարածաշրջանային խաղաղութեան հաստատման հարցում՝ որպէս տարածաշրջանում առաջնորդող երկիր»:

3. Վերոնշեալներին զուգահեռ, ծեր աղէս Անգլիան, կրկնում է իր 100 տարւայ վաղեմութեան նոյն յանգերգը՝ յար եւ նման արջի 7 երգի, այն է՝ շրջանից դուրս քշել ռուսներին...:

Թէ ինչ է նշանակում հայ-ադրբեջանական հաշտութիւն՝ թուրքի միջնորդութեամբ, բաւական է մէկ անգամ եւս կրկնել վերոգրեալ բնութագիրը՝ քաղաքական-դիւանագիտական անբարոյութիւն...:

Սա իր հերթին իրենից ներկայացնում է նաեւ այն, որ «հաշտարար» Թուրքիան Հայաստանի իշխանութիւններին յորդորում է, որ խաղաղութեանը հասնելու համար, պէտք է բաւարարել Ադրբեջանի պահանջները: Եւ ներկայ փուլում այդ պահանջները ՀՀ հիւսիսային շրջանի Տաւուշի 4 գիւղերն են, որոնք ըստ երեւոյթի՝ աչքաթող են արւել Հայաստանի հայրենադաւ իշխանախմբի կողմից: Բայց բոլորն էլ գիտեն, որ ալիեւը այդ չորս գիւղով բաւարարւողը չէ եւ որ յաջորդ փուլում պահանջելու է նոր, այսպէս ասած՝ անկլաւներ, յետոյ «Զանգեզուրի միջանցք» ու վերջապէս՝ «արեւմտեան Ադրբեջան»...:

Այն, ինչ պարզ է՝ Արեւմուտքի թաւրկւած սցենարները՝ Հարաւային Կովկասում, խիստ դիմադրութեան են արժանանում առայժմ մէկ ու միակ ըմբոստացող երկիր՝ Իրանի կողմից: Այդ առթիւ Իրանը շատ յստակ յայտարարել է իր անփոփոխ դիրքորոշումը, որի հասցէատէրերն են նոյն անբարոյ դիւանագէտների միասնական բլոկը՝ ներառւած՝ սիոնիստական Իսրայէլը, որպէս Բաքւի ռազմա-քաղաքական գործընկեր ու դաշնակից:

Նոյն դիրքորոշումն ընդգծեց Իրանի ռազմա-քաղաքական ղեկավարութիւնը, անցնող շաբաթւայ ընթացքում Թեհրան այցելած Հայաստանի պաշտպանութեան նախարար Պապիկեանի հետ հանդիպումներում, որտեղ մասնաւորապէս շեշտը դրւած էր՝ «կովկասեան տարածաշրջանը այլոց համար մրցակցութեան դաշտ դարձնելուց խուսափելը»:

Թէ որքանո՞վ կընդառաջեն Իրանական զգուշացումներին Հայաստանի իշխանութիւնները, այն դէպքում յատկապէս, երբ ընդգծւած հակառուսական ֆոնին, որդեգրած ունեն արեւմտամէտ վեկտոր, ցոյց կը տայ ժամանակը:

Արեւմտեան վեկտորին, այսինքն թուրքական ազդեցութեանը ենթարկւելու Հայաստանի իշխանաւորների ներքին հակառակորդները՝ ընդդիմադիր հոսանքներն ու գլխաւորաբար ՀՅԴ-ն են, որոնք դեռ նախքան 2020-ի ծրագրեալ պատերազմը, քողազերծում էին թաւշականների հայրենադաւութիւնը...:

Հայրենադաւութիւն, որն ցայժմ յանգեցրել է Արցախի հայաթափմանն ու կորստին:

Եւ այդպէս, ահա, «Արցախը տանք, որ լաւ ապրենք»-ին, հետեւել է «անկլաւները տէր, որ խաղաղութիւն լինի»-ն ու այս համազգային աղէտը շարունակւելու է մինչեւ թաւշականների յորջորջող ինքնիշխանութեան ու մէկ խօսքով՝ Հայոց Պետականութեան կորուստը՝ ճիշտ այնպէս, ինչպէս բոլորի համար անհաւատալիօրէն, պատահեց Արցախի դէպքում:

Ու այս պայմաններում, պատահակա՞ն են իշխանախմբի թափթփուկների կողմից ընդդիմադիրների ու մասնաւորապէս ՀՅԴ-ի հասցէին նոր ցեխարձակումները:

Համազգային վերահաս աղէտը կանխելու միտւած ընդդիմադիր շարքերում վերամիաւորւելու եւ մէկ ընդհանուր ճակատ կազմելու նշոյլները հաւասարապէս սարսափեցրել է թէ՛ ալիեւին, եւ թէ՛ նիկոլիստներին: Առաջինն ազգային ուժերի համախմբւածութիւնը համարում է ռեւանշիզմ, իսկ երկրորդը նոյն ուժերին անւանում պատերազմատենչներ...:

Ահաւասիկ, ժողովրդական ցասումի ու ընդվզման նոր ալիքը վերսկսւել է օրերս՝ Գիւմրիից, որն յոյսով ծաւալւելու եւ խտանալու է ինչպէս միւս քաղաք-աւաններում, նոյնպէսեւ՝ քաղաքամայր Երեւանում, որպէսզի մէկ անգամ ընդմիշտ ազգովի ազատւենք հայրենադաւ իշխանութիւններից:

Այլընտրանք՝ չկայ ու չի կարող լինել, այլապէս՝ հայաթափւելու եւ կորստեան է մատնւելու արդէն մեր մայրենի երկիր ՀԱՅԱՍՏԱՆԸ...:

Մենք մեր հերթին հաւատում ենք, որ դա թոյլ չեն տայ իրաւազրկւած, բայց քաջակորով արցախցիները, համբերութեան բաժակը լցւած ու արժանավայել ընդվզման պատրաստող մեր հայրենաբնակ հայորդիներն ու մշտապէս համազգային նշանակութեան մարտահրաւէրները դիմակայող աշխարհասփիւռ հայութիւնը:

ՈՏՔԻ՛ ԱՐՑԱԽ
ՈՏՔԻ՛ ՀԱՅԱՍՏԱՆ
ՈՏՔԻ՛ ՍՓԻՒՌՔ...

Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան «Նայիրի» պարախմբի տարեկան ելոյթը՝ նուիրուած պարախմբի 15-ամեակին



Թեհրանի հայկական համայնքի միութիւնները իրենց առաքելութիւնների ծիրում հայկական մշակոյթով սնում ու դաստիարակում են մեր մատաղ սերնդին: Հայկական մշակոյթի անբաժան մասնիկներից է պարը, որի շնորհիւ հայ պատանին ու պարմանուհին հաղորդակից են դառնում հայկական ազգային աւանդոյթներին:

Թեհրանահայ համայնքի պարախմբերից է Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան «Նայիրի» պարախումբը, որը մարտի 7-ին եւ 8-ին երկու օրերի շրջանակում, Հ. Մ. «Միփան» միութեան «Նայիրի» սրահում հանդիսատեսին ներկայացրեց պարախմբի տարեկան ելոյթը, նուիրուած՝ «Նայիրի» պարախմբի հիմնադրման 15-ամեակին:

Պարախմբի գեղարուեստական յայտագրին մաս էին կազմում հայկական աւանդական պարեր, ինչու չէ, նաեւ այլ ազգերի մշակոյթը ներկայացնող մի քանի պարեր: «Նայիրի» պարախմբի գեղարուեստական ղեկավարն է Հայաստանի Հանրապետութեան Մշակոյթի նախարարութեան ոսկէ մեդալակիր Արտաւազդ Աւետիսեանը, գլխաւոր պարուսոյց՝ Մերի Աւետիսեանը, պարուսոյցներ՝ Թինա Անտոնը, Միւնէ Շահվալադեանը եւ Նինէլ Մանուկեանը, իսկ փորձավարներ՝ Մինէ Միրզախանեանը, Էլին Մելիքսէթեանը, Անի Քրիստի Դանիէլեանը եւ Վենիտա Միրզախանեանը:

Միջոցառումը մեկնարկեց հայկական խիզախ եւ պայքարունակ ոգին ներշնչող մարտական պարով, որից յետոյ միութեան անունից ողջոյնի եւ բացման խօսքով հանդէս եկաւ Շարիս Մելքոմ Աբգարը: Նա նշեց. «Ազգային մշակոյթի եւ մասնաւորապէս պարարուեստի մասին կարելի է խօսել ժամանակի կոմպոզիտոր, երգահան եւ ազգագրագէտ՝ Կոմիտասի ասուած բառերով, թէ՝ պարը արտայայտում է իւրաքանչիւր ազգի գծերը, մանաւանդ բարքն ու քաղաքակրթութեան աստիճանը»: Անդրադառնալով «Նայիրի» պարախմբի 15-ամեայ անցեալին, նա նշեց. «Հ. Մ. Մ. «Նայիրի» միութիւնը, 2008 թւականից սկսած հիմք է դրել «Նայիրի» պարախմբի: 2008-ից 2010 թւականներին պարախումբը կառավարել է Արիգա Ղահրամանեանը, այնուհետեւ մինչեւ 2014 թւականը ղեկավար է նշանակւել Հայաստանից ժամանած վաստակաւոր պարուսոյց Յարութիւն Կարապետեանը: Նոյն շրջանում նաեւ կեանքի է կոչւել յանձնախումբ, որոնք նուիրուածութեամբ միշտ կանգնած են եղել պարախմբի կողքին: 2014 թւականին նոր շունչ փոխանցելու մտայղացումով աշխատանքի է հրաւիրւում Մելան Սեֆեանը եւ Թինա Անտոնը: Գեղարուեստական ղեկավար է նշանակւում Հայաստանից հրաւիրուած Հայաստանի Հանրապետութեան Մշակոյթի նախարարութեան ոսկէ մեդալակիր՝ Արտաւազդ Աւետիսեանը, իսկ ժամանակակից պարերի համար Հայաստանից հրաւիրւում է Մերի Աւետիսեանը, նշանակւելով, որպէս գլխաւոր պարուսոյց»:

Նա նշեց. «Պարախումբն իր կանոնաւոր աշխատանքն է ունեցել մինչ 2020 թւականը: Սակայն համաճարակի պատճառով շուրջ երկու տարի դադարեցւում են աշխատանքները, իսկ 2022 թւականից պարախումբը վերսկսում է իր գործունէութիւնը հետեւեալ փոփոխութիւններով՝ Թինա Անտոնը նշանակւում է, որպէս անսամբլի ուսուցիչ, Միւնէ Շահվալադեանը թիւ 1 եւ թիւ 2 խմբերի, իսկ Նինէլ Մանուկեանը թիւ 3 խմբի ուսուցչուհիներ: Փորձավարներ են նշանակւում Մինէ Միրզախանեանը, Էլին Մելիքսէթեանը, Անի Քրիստի Դանիէլեանը եւ Վենիտա Միրզախանեանը: «Նայիրի» պարախմբի պատասխանատու կազմում աւելի քան 13 տարի Անի Աբրահամեանի գլխաւորութեամբ աշխատում են՝ Հրաչիկ Շահբազեանը, Ռուբինա Յարութիւնեանը, Այլին Մարութեանը եւ Էրիկա Քարիմ Մասիհին»:

Բացման խօսքից յետոյ մէկը միւսին յաջորդեց պարախմբի սաների կատարումները:

Աւելի քան մէկ ժամ տեւողութեամբ «Նայիրի» պարախմբի սաները, տարիքային տարբեր խմբերով, գունազարդ հագուստներով եւ իրարայաջորդ արագ տեմպով հանդիսատեսին հրամցրին հայկական հեզաճկուն պարը, եւ մի քանի այլ պարեր, որոնք ներկայացնում էին այլ ժողովուրդների մշակոյթը:

Ընթացքում ցուցադրուեց տեսաֆիլմ, պարախմբի փորձերի եւ անցած 15-ամեայ ուղու մասին:

Մարտի 7-ի ծրագրին ներկայ էին՝ Թ. Հ. Թ. Պատգամաւորական ժողովի ատենապետ Սուրիկ Աբնուսեանը, «Ալիք» հաստատութեան ներկայացուցիչ Սեւան Դանիէլեանը, Տ. Գրիգորիս քհնյ. Ներսիսեանը, Թ. Հ. Թ. Թեմական խորհրդի, «Ալիք» օրաթերթի, ազգային իշխանութեան, մարմինների ու միութիւնների ներկայացուցիչներ:

Միջոցառումը եզրափակուեց տարիքային բոլոր խմբերի միասնական պարով:

Ապա բեմ հրաւիրուեց Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան վարչութեան նախագահ Սերոժ Օհանեանը: Իր ելոյթի ընթացքում վարչութեան նախագահը անդրադառնալով մշակոյթ հասկացութեանը նշեց, որ հայկական մշակոյթը ներկայացնում է հայ ժողովրդի ինքնութիւնը, որի պահպանման միջոցով հայ ժողովուրդը գոյատեւել է դարեր շարունակ: Նա իր գնահատանքի խօսքը ուղղեց «Նայիրի» պարախմբի գեղարուեստական ղեկավարին, պարուսոյցներին, փորձավարներին, եւ բոլոր սաներին, որոնք լաւագոյնն են իրականացնում, հայկական մշակոյթը պահպանելու եւ այն տարածելու գործում:

Նա նաեւ իր գնահատանքի խօսքը փոխանցեց Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան «Նայիրի» պարախմբի յանձնախմբին, որոնք տարիներ է ինչ չեն խնայում իրենց կարելին յօգուտ պարախմբին եւ ինչու չէ Հ. Մ. Մ. «Միփան» միութեանը համագործակցութեան համար:

Իր ելոյթի աւարտին Սերոժ Օհանեանը շնորհաւորելով Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանին վերընտրուելու կապակցութեամբ, բեմ հրաւիրեց պատգամաւորին եւ նշեց, որ այս միջոցառումը պատգամաւորի վերընտրուելուց յետոյ համարւում է նրա ներկայութեամբ առաջին համայնքային ծրագիրը:

Պատգամաւոր Արա Շահվերդեանը իր քաջալերանքի խօսքերի ընթացքում, իր գնահատանքը ուղղեց Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան վարչութեանը, Արեւստից միութեանը եւ անդամներին, իրենց ազգանուէր աշխատանքների կապակցութեամբ: Պատգամաւորը ընդգծեց, որ հայկական խրոխտ եւ միասնական պարերը արտացոլում են մեր ժողովրդի պայքարունակ ոգին եւ միասնականութիւնը, որը առաջ ընթանալու եւ դժուարութիւնները կարգաւորելու խթան է հանդիսանում:

Արա Շահվերդեանը նշեց. «Մեր փոքրիկները, մեր պատանի պարմանուհիները եւ երիտասարդ-երիտասարդուհիները համայնքի հարըստութիւններն են համարւում եւ բոլորս պարտաւոր ենք մեր միութիւնների յարկերի տակ առիթ ստեղծել, որպէսզի մեր մատաղ սերնդի ներկայացուցիչները ստանալով հայեցի դաստիարակութիւն կրթեն ու դաստիարակւեն իրենց նախասիրած ոլորտներում եւ հնարաւորութիւն ունենան փայլելու միջազգային բեմերում»: Նա իր երախտագիտութեան խօսքը փոխանցեց ժողովրդին, որոնք կրկին վստահելով իրեն, վերընտրել են, որպէս պատգամաւոր եւ յաւելեց, որ չի խնայելու իր կարելին համայնքի հարցերի կարգաւորման ի խնդիր:

Վերջում գնահատեցին պարախմբի ղեկավարները, Հայաստանից ժամանած Արտավազդ Աւետիսեանը եւ բոլոր սաները:

Թղթակցութիւնը կազմեց
ԿԱՐԻՆԷ ԴԱՒԹԵԱՆԸ

Տիգրան Աբրահամեան.

«Մի կողմ դնենք սրանց լկտի դրսեւորումները երկրի ներսում, դրսում՝ Ալիեւի առաջ խոնարհ ստրուկի դէմքով պարտուածների կոյտ են»

ԱԺ «Պատիւ ունեմ» խմբակցութեան պատգամաւոր Տիգրան Աբրահամեանը գրում է.

«Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ սահմանների դելիմիտացիայի/դեմարկացիայի գործընթացը տեղից չի պոկվի ու այս առումով որեւէ լաւատեսական սպասում չի լինելու, որովհետեւ Ադրբեջանի նպատակը ոչ թէ միջազգային սկզբունքներին եւ նախադէպերին համահունչ գործընթացի մէջ մտնելն է, այլ պարզապէս Հայաստանից նոր տարածքներ խլելը:

Հիմա հանրային դիսկուրսը երեւացող եւ մեծամասամբ չերեւացող մակարդակում հետեւեալն է՝ շարունակել զիջել յանուն խաղաղութեան խոստման, թէ՞ պայքարել ու յաղթել:

Ովքեր դեռ հաւատում են, որ տարածքներ ու ազդեցութիւն զիջելով Հայաստանին կը յաջողի խաղաղութեան հասնել, նրանց թիւր էականօրէն նուազել է հէնց միայն այն պատճառով, որ կա՛մ իշխանութեանն այլեւս չեն հաւատում, կա՛մ աչքների առաջ վերջին 5-6 տարիների ցաւալի փորձն է, երբ ՀՀ իշխանութիւնն անընդհատ զիջում է, իսկ Ադրբեջանն անընդհատ պահանջում:

Ինչ վերաբերւում է պայքարելու եւ դիմակայութիւնը յաղթելու մասին, ապա սա վերաբերւում է բոլոր ճակատներին՝ քարոզչականից մինչեւ դիւանագիտական, իսկ ծայրայեղ դէպքում՝ ռազմի դաշտում:

Բայց այս դէպքում էլ այլ տրամաբանական հարց է ծագում՝ ո՞վ պէտք է այդ պայքարը մղի՝ փաշինեանական իշխանութի՞ւնը:

Մի կողմ դնենք սրանց ամբարտաւան կեցուածքն ու լկտի դրսեւորումները, որն արտայայտւում է բացառապէս երկրի ներսում, իսկ դրսում՝ Ալիեւի առաջ խոնարհ ստրուկի դէմքով պարտուածների կոյտ են:

Ի՞նչ է հանրութիւնը տեսել վերջին 5-6 տարիներին՝ վճռականութեան խոստում, հուժկու տեքստեր ու անվերջ երդումներ: Արդիւնքը՝ զրօ, իսկ իշխանութեան խոստացած հեռանկարների նկատմամբ նուազագոյն վստահութիւն:

Ահա մեր խնդիրների ու փակուղու կարճ ձեւակերպումը: Քանի կան նիկոլները՝ Հայաստանը, ցաւօք, շարունակելու է պարտութեան շղթան»:

Panorama.am

Հրանտ Մելիք-Շահնազարեան.

«Հայ-ադրբեջանական սահմանի այդ հատուածը միակն է, որտեղ դեռեւս պահպանուել է նախապատերազմեան իրավիճակը»

«Փոքրիշատէ կազմակերպուած դիմադրութիւն ցոյց տալու դէպքում Ադրբեջանին երբեք չի յաջողի անգամ մէկ քառակուսի մետր հող գրաւել Տաւուշում: Հայ-ադրբեջանական սահմանի այդ հատուածը միակն է, որտեղ դեռեւս պահպանուել է նախապատերազմեան իրավիճակը»,-նման համոզմունք է յայտնել «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի հիմնադիր, քաղաքագէտ Հրանտ Մելիք-Շահնազարեանը:

Նա ընդգծել է՝ աւելին, սա այդ սահմանի այն հատուածն է, որը անվրտանգային մեծ առաւելութիւն է տուել մեզ ոչ միայն Տաւուշում, այլեւ Արցախում:

«Պատահական չէ, որ ՀՀ ԶՈՒ ամենամարտունակ ստորաբաժանումները հէնց Տաւուշում էին տեղակայուած: Արցախում պատերազմ սկսելու պարագայում այստեղից ամէն պահ կարելի էր երկրորդ ճակատ բացել եւ շեշտակի հարուածով կոտրել թշնամու ողնաշարը: Այն փաստը, որ 2020-ին Նիկոլի կառավարութիւնը չի դիմել այդ քայլին, իրենց դաւաճան լինելու հերթական ապացոյցներից է:

Ու չնայած 44-օրեայ պատերազմին կրած մեր ծանր պարտութեանն ու դրան հետեւած ոչ պակաս ծանր կորուստներին՝ հայ-ադրբեջանական սահմանի տաւուշեան հատուածը շարունակում է մնալ թշնամուն զսպելու եւ ուժերի հաւասարակշռութիւնը վերականգնելու կարեւոր գործօն: Ահա պաշտպանական այդ վերջին ռեսուրսից են այսօր ցանկանում զրկել մեզ Ալիեւն ու Նիկոլը:

Ադրբեջանի պահանջն այսպէս կոչուած անկլաւները չեն: Սա չի կարելի չհասկանալ: Հայ-ադրբեջանական սահմանի տաւուշեան հատուածի ներկայիս տեսքը սեփական ուժերով վերականգնելու եւ երկիրը փրկելու մեր վերջին յոյսն է: Եթէ այստեղ էլ կորցնենք, ապա մեր Հայրենիքում ապրելու միակ հնարաւորութիւնը միայն ու միայն ուրիշների ողորմութեան արդիւնքը կը լինի: Դէ ապրելը ո՞րն է՝ խղճուկ գոյութիւն պահպանել»,-նշել է նա:

Panorama.am

Միխայիլ Շահնազարով.

«Հայաստանի աւարտը շատ ողբերգական է լինելու՝ հաշւի առնելով Ադրբեջանի եւ Թուրքիայի հարեւանութիւնը»

Alpha News-ի ուղիղ եթերում ռուս լրագրող եւ մեդիա մենեջեր Միխայիլ Շահնազարովը յայտարարել է, որ եթէ Փաշինեանը մնայ իշխանութեան ղեկին, Հայաստանը կը կանգնի ցեղասպանութեան եւ երկրի լիակատար կործանման վտանգի առաջ:

«Առանց խաբելու փորձ անելու՝ կասեմ, որ մօտ ապագայում ամէն ինչ կախուած է ինչ-որ պահի իրավիճակից: Եթէ նա մնայ իշխանութեան, ապա Ռուսաստանի հետ յարաբերութիւններում Հայաստանին ոչ մի լաւ բան չի սպասում: Ես նոյնիսկ կարող եմ կանխատեսումներ չանել, այլ պարզապէս խնդրել Հայաստանի ժողովրդին նայել Մերձբալթեան Հանրապետութիւնների դեգրադացիայի ուղին:

Սակայն Հայաստանի աւարտն աւելի ողբերգական է լինելու՝ հաշւի առնելով Ադրբեջանի եւ Թուրքիայի հարեւանութիւնը: Այսինքն՝ Հայաստանում չի լինի ուղղակի բնակչութեան արտահոսք, որը շարունակւում է Մերձբալթեան Հանրապետութիւններում, ծնելիութեան նուազում եւ այլն: Կը լինեն գործընթացներ, որոնք կոչւում են էթնիկ զտումներ, ցեղասպանութիւն եւ այլն: Ահա թէ ինչի է տանում Հայաստանը Նիկոլ Վովայի Փաշինեանը:

Բայց ես լաւատես կը լինեմ, քանի որ կարծում եմ, որ վերադարձի կէտը դեռ չի անցել: Բայց հիմա շատ բան կախուած է նրանից, թէ հնարաւո՞ր է ինչ-որ կերպ փոխել իրավիճակը: Կը փոխւի՞ արդեօք իշխանութիւնը Հայաստանում: Միայն բացառապէս իշխանափոխութիւնը կարող է Հայաստանի ժողովրդին գոյատեւելու ինչ-որ շանս տալ, ես եւս մէկ անգամ շեշտեմ՝ գոյատեւելու: Եթէ այն ամէնը, ինչ տեղի է ունենում, չեն հասկանում երկրի ներսում, ապա դա, անշուշտ, ողբերգութիւն է»,- ընդգծել է Շահնազարովը:

Ակնարկ.

Հայաստանի գերիշխանութեան բրիտանական ընկալումը

Բրիտանիոյ պաշտպանութեան փոխնախարարին յայտարարութիւնը Բրիւսէլէն, Գերմանիայէն եւ Ֆրանսայէն հնչած յայտարարութիւններու շարքին մէջ է՛ եւ չէ՛: Շարքին մէջ է այն առումով, որ Միացեալ Նահանգներու մղումով հաւաքական Արեւմուտքի մաս իբրեւ երկիր համազօրակցութեան երեւոյթի շարժիչ գործօնը հակառուսականութիւնը կը դաւանի: Այլ խօսքով, Հարաւային Կովկասէն ռուսական գործօնի դուրս մղումը հաւաքական առաջադրանք է Վաշինգտոնի, Բրիւսէլի եւ հաւաքական Արեւմուտքի մաս երկիրներուն համար: Փորձենք տարբաղադրել յայտարարութիւնը եւ տեսնել, թէ ճի՞շտ ո՞ւր կը կայանայ անոր իւրայատկութիւնը կամ այս պարագային շարքին մէջ ըլլալով հանդերձ շարքէն դուրս նաեւ յատուկ ուշադրութիւն կենտրոնացնելու պատճառը:

Այսպէս. Բրիտանիան ՀԱՊԿ-ի մէջ հայաստանեան անդամակցութիւնը սառեցնելու որոշումը կընդունի իբրեւ Հայաստանի գերիշխան իրաւունքի իրականացում: Բրիտանիան պատրաստ է նաեւ համագործակցելու եւրատլանտեան դաշնակիցներու հետ՝ Հայաստանին Ռուսիոյ պատասխան գործողութիւններու սպառնալիքներուն դէմ աջակցութիւն ցուցաբերելու համար:

Պարզ է, որ կը քաջալերի սառեցման որոշումը, զայն որակելով Երեւանի ինքնիշխան իրաւունքը: Գերիշխանութեան մասին խօսելով Բրիտանիոյ պաշտպանական համակարգի ներկայացուցիչը կը մոռնայ, որ Բաքուն ներխուժած է Հայաստանի Հանրապետութեան գերիշխան տարածքներ: Այդ մասին որեւէ գնահատական չէր կատարած օրին, չի կատարեր նաեւ այսօր:

Այլ ուղղութեամբ սակայն, կը խոստանայ ռազմական հակազդեցութիւն ունենալ, եթէ Մոսկուան դիմէ պատասխան քայլերու:

Շարունակելով տրամաբանութիւնը, Բրիտանիան ՆԱՏՕ-ի ուժերուն հետ միասին, ըստ այս յայտարարութեան, անպատասխան չի ձգեր Մոսկուայի կողմէ Հայաստանի գերիշխանութեան դէմ առնուած որեւէ քայլ:

Շատ պարզ է այստեղ հակասութիւնը: Բրիտանիան նախանձախնդիր չէ պաշտպանելու Հայաստանի Հանրապետութեան գերիշխանութիւնը, այլապէս գերիշխան տարածքներու դէմ ադրբեջանական ներխուժումին մասին պէտք է արձագանգէր եւ աւելին, ըստ այս յայտարարութեան, դիմէր պատասխան գործողութեան, պաշտպանելու համար Հայաստանի ինքնիշխանութիւնը:

Աւելի պարզ կը դառնայ, որ այս յայտարարութեան մղիչ առանցքային բաժինը ռուսական գործօնի դուրս մղումն է: Հայաստանը ռուսական ազդեցութեան տիրոյթէն դուրս բերելն է եւ ոչ թէ գերիշխանութեան պաշտպանութիւնը:

Բրիւսէլի, Բեռլինի թէ Ֆրանսայի զօրակցութիւնները չէին շօշափած ՆԱՏՕ-ի ուժերով Հայաստանի հարցով Մոսկուային պատասխան տալու հարցը: Ընդհանուր ակնարկներ զօրակցելու կամ պաշտպանելու առումով արձանագրած էին, սակայն այսքան ուղղակի եւ շեշտակի հայաստանեան դաշտին վրայ փոքրիկ պատերազմ վարելու մասին նշում չէին կատարած:

Ահա այս հանգամանքներով է, որ Բրիտանիոյ ներկայացուցիչին յայտարարութիւնը համաարեւմտեան շարքին մէկ օղակը ըլլալով հանդերձ դուրս կու գայ այդ շղթայէն:

Հայաստանեան խաղաթուղթով Ռուսիոյ սպառնալը զուտ բրիտանական քայլ կրնայ չդիտարկուիլ: Արեւմուտքը ՆԱՏՕ-ի ուժերով Ռուսիոյ հակազդելու ուղերձ կը յղէ Բրիտանիոյ փոխնախարարին ճամբով:

Նման ուղերձով Երեւանը կը մղէ ՀԱՊԿ-ի անդամակցութիւնը սառեցած պահելու, Մոսկուայի հարցադրումը չընկալելու իբրեւ վերջնագիր եւ լռելեայն մղելու հայկական կողմը, որ փուլ առ փուլ երթայ աստիճանական մազլցումի:

Հրահրումի այս ուղերձները իբրեւ թէ ապահովագրուած են ՆԱՏՕ-ի ուժերով: Քաղաքականօրէն պարզամտութիւն պիտի ըլլար համոզուիլը, որ ՆԱՏՕ-ն պատրաստ է պաշտպանելու Հայաստանը:

Քաղաքական տրամաբանութեան զուգահեռներով, Մունիխէնի հանդիպումին եւ Փարիզէն ու հիմնականօրէն Լոնդոնէն հնչող այս յայտարարութիւններուն կը զուգադիպին Երեւանէն կատարուող համարձակ յայտարարութիւնները՝ սառեցումէն անդին, «Զւարթնոց»-էն ռուսերու հեռացման պահանջով յատկանշուող:

Բրիտանական յայտարարութիւնները եթէ կտրուկ դատապարտէին ադրբեջանական զօրքերու ներխուժումը Հայաստան, հայկական գիւղերու յանձնումի Բաքւի պահանջները կամ Հայաստանի Սահմանադրութեան կամ օրէնսդրութեան փոփոխութեան վերաբերեալ Ադրբեջանի պաշտօնական ներկայացուցիչներու բարձրաձայնումները, ապա այն ատեն համոզիչ կը դառնար, որ անոնց առաջադրանքը Հայաստանի գերիշխանութեան պաշտպանութիւնն է: Սակայն, երբ խնամքով անուշադրութեան կը մատնուին Ադրբեջանի աղաղակող ոտնահարումները եւ բոլոր սլաքները կուղղուին Ռուսիոյ Դաշնութեան, ապա աւելի քան պարզ կը դառնայ հայաստանեան խաղաթուղթի շահարկումը:

Չմոռնանք, որ ադրբեջանական ուժանիւթի արտահանման կարեւորագոյն գործընկեր է Բրիտանիան: Իսկ այս հանգամանքը աւելի կը կշռէ, քան Հայաստանի գերիշխանութիւնը Բրիտանիոյ համար: Ինչպէս անցեալին ադրբեջանական նաւթը՝ հայկական արիւնէն: Առաջին հերթին Բրիտանիոյ համար:

«Ա.»
«Ազդակ»

ՈՒՐԿԷ՞ ՀԱՍԱՆՔ, ԴԷՊԻ Ո՞ՒՐ – 1

«ՉԵ՛Ն ԸՆԵՐ, ՃԱ՛ՆԸՄ». ԲԱՅՑ ԸՐԻ՛Ն...

Հազար ու մի վերք ես տեսել,- էլի՛ կը տեսնես...
(...)Աշնան քաղած արտի նման՝ Հազար զոհերի
Չհաւաքւած բերք ես տեսել,- էլի՛ կը տեսնես:
Ե. ՉԱՐԵՆՑ



Երբ մեծն Չարենց իր «Հայաստանին» խորագրեալ գազէլը կը գրէր, վստահաբար իր աչքին առջեւ ունէր հազար փորձանքի ու արհաւիրքի մէջէն անցած Հայաստանն ու մեր ազգը: Նո՛յնքան վստահութեամբ կրնանք արձանագրել, թէ անոր մտքէն չէր անցած, որ իր եւ մեր հայրենիքը պիտի հասնի ներկայ աղէտալի վիճակին, անյատակ վիհն ի վար գլորելու կացութեան:

Հայաստան, որ 1918-ին «անձեւ քաոս»-ի մէջէն ծնունդ առաւ իբրեւ անկախ հանրապետութիւն, յետոյ, իր զաւակներուն պայքարով, արեա՛ն գնով ընդարձակեց իր տարածքը, զայն վերածեց բացարձակ մեծամասնութեամբ հայաբնա՛կ հայրենիքի, յետոյ, տասնամեակներ շարունակ ենթակայ մնաց խորհրդային կարգերուն (այդ փուլի նւաճումնե՛րն ալ, աղէտնե՛րն ալ ծանօթ են բոլորիս), ի վերջոյ, անկախութեան արեգակը կրկին փայլեցաւ իր երկինքին մէջ. Արցախեան շարժումին ճամբով, անգամ մը եւս պայքարով ու հնարամտութեամբ՝ իր զաւակները յաջողեցան վերաշահիլ խլւած տարածքներ, հիմա, յատկապէս վերջին երեք ու կէս տարիներուն, այսինքն՝ 44-օրեայ պատերազմէն ասդին, մերթ մեծ, երբեմն փոքր քայլերով՝ կը վազէ կորուստէ կորուստ: Ինչո՛ւ, որովհետեւ բարի խոստումներով իշխանութեան հասած խմբակը կրկին ու կրկին փաստած է, թէ միաժամանակ անկարող է ու ստախօս, համբակներէ կազմւած է գրեթէ բոլոր մարզերուն մէջ, քաղաքականէն մինչեւ դիւանագիտական, զինուորական, տնտեսական եւ՝ ներքին համերաշխութիւն գոյացնելու իմաստով (ցանկը երկար է, կայ նաեւ օտարին վարձկանը, կամակատարը ըլլալու փաստացի իրողութիւնը):

Օր չանցնիր, որ վնասարար ձախաւերութեան նոր փաստ մը, կոր ըստաբեր նոր քայլեր չառնին իշխանապետին ու կողքին (չ)գործողներուն կողմէ: Օր չանցնիր, որ խելամիտ մարդիկ, ի Հայաստան եւ Սփիւռքի տարածքին, իրենց նկատողութիւններով, մեկնաբանութիւններով եւ վերլուծումներով, լաստեղական ցուցահանդէսներ չսարքեն կործանարար ընթացքին մասին, եւ սակայն, կարծէք թէ այդ բոլորը կը վերածւին անապատի մէջ ցամքող վտակի. լսողներ կան, սակայն շատեր կը նախընտրեն... չլսել ու չտեսնել իրականութիւնները, կը նախընտրեն կրաւորականութիւն, կառչած մնալ իշխանաւորներուն սուտերով հիւսւած «թռչող գորգ»-երուն, որոնք այլապէս փտած են ու ծէն-ծէն դարձած, այլեւս անկարող են պահպանելու իրենց կառչողներուն ապահովութիւնը, բարօրութիւնն ու ապագան, ալ ո՛ւր մնաց՝ ազգ ու հայրենիք, Սփիւռք եւ հազարամեակներու ժառանգութիւն:

Կարժէ, որ երբեմն օր աւուր «հրամցւած» վազքին դիմաց կանգ առնենք պահ մը՝ եւ հարց տանք. ուրկէ՞ սկսանք, ո՞ւր հասած ենք եւ այս վազքը դէպի ո՞ւր կը տանի, եւ, ամենէն կարեւորը, ինչպէ՞ս կարելի է - պարտաւո՛ր ենք - կորուստներուն սանձումը, վերականգնումը:

ԱՂԷՏԱԲԵՐ ՔԱՅԼԵՐԷՆ ՄԱՍՆԻԿ ՄԸ

Միացեալ Նահանգներու նախորդ նախագահին՝ Թրամփի պաշտօնավարութեան առաջին տարին չէր լրացած, երբ ամերիկեան թերթ մը հրատարակեց անոր սուտերուն մէկ ցանկը՝ մօտաւորապէս 1 500 սուտ: Անկէ ետք, այդ երկիրը ապրեցաւ բազմաթիւ տաք ու պաղ փուլեր, սակայն զայն կառավարողներուն բերած վնասները անբաղդատելի են մեր հայրենիքի իշխանաւորներուն ըսածներուն եւ ըրածներուն հետ: Մեր ողբերգութիւններուն մէկ արմատը բաւական հին է. քաղաքական մարդիկ, պատմագէտներ, մշակոյթի եւ եկեղեցւոյ ծառայողներ ու շատ-շատեր ամէն քայլափոխի ահազանգ հնչեցուցած են, գալիք նոր աղէտներուն մասին նախատեսութիւններ կատարած են՝ փաստեր ցոյց տալով (հիմա ալ կընեն), սակայն մնացած են անտեսւած. նախատեսութիւններուն մեծ մասը կարձ ատեն ետք իրականութիւն դարձած է, եւ... կործանումը կը շարունակւի մինչեւ այսօր: (Չմոռնանք, որ «նախկին» պիտակին արժանացած Թրամփը կը թւի դարձեալ շահած ըլլալ Հանրապետական կուսակցութեան թեկնածուն ըլլալու տոմսը):

Չենք ուզեր մտնել «Բիւզանդական բանավէճ»-ի այն ոլորտներուն մէջ, թէ արդեօք այս իշխանաւորները կամովի՞ն, թշնամիին՞ կամակատարը-գործակալը ըլլալո՞ւ, դուրսերէն կառավարւած ըլլալո՞ւ հետեւանքով, թէ՞ անգիտակցաբար (չգործածենք տգիտաբար, դաւաճանաբար եզրերը) ըրին ու կընեն այս բոլորը, որովհետեւ մեր ժողովուրդին ու հայրենիքին շահերուն դիտանկիւնէն, պատասխանները ո՛չ մէկ տարբերութիւն կընեն (չմոռնանք նաեւ, որ նախորդ իշխանաւորներէն գոնէ երկուքը, երբ նկատեցին, որ հասած էին իրենց կարողութենէն վեր պատի առջեւ, հրաժարական տւած էին):

Եկէ՛ք, փորձենք մասնակի ցանկը կազմել «խաղաղութիւն պիտի բերենք»-ներով ու «ապագայ կայ»-ով (իբրեւ թէ) երկիր կառավարողներուն կործանարար արարքներուն:

- Խաղաղութեան փոխարէն, ունեցանք քանի մը, չըսելու համար շարունակական պատերազմներու շղթայ մը՝ Ադրբեջանի միջեւ նախորդ տարիներուն ալ պատերազմական վիճակը ամբողջովին չէր փարատած, սակայն հիմա՞ ...):

- Անցեալ տասնամեակներու առաւել կամ նւազ յաջողութեամբ տարւած յաղթանակները ո՛չ միայն կը փոշիանան, այլ մինչեւ իսկ փորձ կըլլայ հաւատացնելու, թէ մենք Ո՛Չ ՄԷԿ ՅԱՂԹԱՆԱԿ ՏԱՐԱԾ ԵՆՔ, նախկինները միայն պարտութիւն բերած են, 2016-ի պատերազմն իսկ պարտութեամբ աւարտած ենք, Շուշին չենք ազատագրած 1993-ին, այլ «ազերիներէն խլած ենք» ու հիմա վերադարձուցինք իր տիրոջ: Իսկ ամենէն ահաւորն ու ողբերգականը՝ մեր զոհերը անիմաստ բաներու համար ճակատած են թշնամիներուն դէմ: Եւ ահա՝ Եռաբլուրը պղծելու շարաններ...

- Նախ կորսնցուցինք Արցախի 75 առ հարիւրը, մարդիկ ըսին, որ մնացեալն ալ կորստեան վտանգի տակ է. այդ ալ պատահեցաւ վեց ամիս առաջ: Իշխանաւորները, ինչպէս իրենց բոլոր ձախաւերութիւններուն ատեն, նոյնպէս ալ այս կորուստներուն՝ փորձեցին յանցաւորներ գտնել ներսէն ու դուրսէն, յաճախ պարուրւելով «նախկինները ըրած էին» ստաբանութիւններու պատմուճանին մէջ (նախկիններուն մեղքերը գոնէ չեն տարածւիր՞ այս կալւածներուն վրայ): Յաւելւա՞ծ մը կուզէ՞ք. հայկական աւաններ եւ շրջաններ՝ թուրքական անունով կոչւիլ, առանց մոռնալու «Արցախը Ադրբեջանին պատկանած է», «Ադրբեջանին ամբողջականութիւնը կընդգրկէ Արցախն ու Հայաստանի սահմանամերձ մասնիկները» ու նման ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ:

- Երկրի ապահովութեան գլխաւոր երաշխաւորին՝ բանակին «կոնակը կոտրեցին» պատերազմով ու անոր հետեւած՝ անփոյթ վերաբերմունքով: «Բանակը պիտի վերակազմակերպենք»-ներն ու նման հաւաստիքներ լոյս աշխարհ չեկան, ընդհակառակն, արձանագրուեցան աղէտներ, բանակայիններու ձեռքերը իրողական կապանքի մէջ դրւած են, բարձրաստիճան զինուորականներ պաշտօնազրկուեցան ու հալածանքի ենթարկուեցան, բանակի ղեկավարութիւնը մատնուեցաւ խղճալի վիճակի (չմոռնանք, որ թշնամիները քանիցս այս իմաստով պահանջներ ու նախապայմաններ դրին իշխանաւորներուն դիմաց):

(Շար. 1)

Գիտնականները բացայայտել են որոշումների կայացման գործում հոտերի դերը

Կոլորադոյի համալսարանի Անշութց բժշկական համալսարանի գիտնականները պարզել են, որ հոտերը խթանում են ուղեղի որոշ բջիջներ, որոնք կարող են դեր խաղալ արագ որոշումներ կայացնելու մէջ:

Հետազօտութիւնը հրապարակուել է Current Biology ամսագրում:

Գիտնականները կենտրոնացել են հիպոկամպուսի վրայ ուղեղի մի հատւած, որը կարեւոր է յիշողութեան եւ ուսուցման համար: Նրանք գիտէին, որ այսպէս կոչւած «ժամանակային բջիջները» կարեւոր դեր են խաղում հիպոկամպուսի աշխատանքի մէջ, բայց չգիտէին դրանց դերն ասոցիատիւ ուսուցման մէջ:

Գիտափորձի ժամանակ հետազօտողները նկատել են, որ երբ մկներին հնարաւորութիւն է տրւել արձագանգելու մրգային հոտին լիզելով քաղցր ջուր արձակող ժայթքումը, նրանք արագ սովորեցին լիզել մրգային հոտը, ի տարբերութիւն հանքային իւղի հոտի:

«Նրանք պէտք է հոտը կապեն իրենց արածի արդիւնքի հետ, որպէսզի սովորեն որոշումներ կայացնել: Երբ դա մրգային հոտ է, նրանք լիզում են եւ վարձատրութիւն են ստանում: Երբ դա հանքային իւղ է, նրանք դադարում են լիզել»,- ասել են գիտնականները:

Արդիւնքում, որքան շատ էին մկները սովորում, այնքան աւելի շատ էին բջիջները գրգռւում, ինչը յանգեցրեց հոտի աւելի արագ վերծանման եւ թոյլ տւեց մկներին արագ սովորել ընտրել մրգային հոտը:

Որոշումների կայացման կատալիզատորը հոտն է, որն անցնում է քթի միջով՝ նեարդային ազդանշաններ ուղարկելով հոտառական հատւածին եւ հիպոկամպին: Այս երկու օրգանները սերտօրէն կապւած են: Տեղեկատւութիւնը արագ մշակւում է, եւ ուղեղը որոշումներ է կայացնում՝ հիմնւելով ստացւած տւեալների վրայ:

«Մինչ այս մենք չգիտէինք, որ հիպոկամպում կան որոշումներ կայացնող բջիջներ: Հիպոկամպը բազմաֆունկցիոնալ է»,- ընդգծել են հետազօտութեան հեղինակները:

Յայտնի է դարձել պատմութեան մէջ ամենայայտնի բջջային հեռախօսը

Պատմութեան մէջ ամենայայտնի բջջային հեռախօսը Nokia 1100-ն էր:

Աղբիւրի տւեալներով՝ վարկանիշի առաջատարը 2003 թւականին թողարկւած Nokia 1100-ն է, որը վեց տարւայ ընթացքում վաճառւել է 250 մլն. հատ տպաքանակով: Վարկանիշում երկրորդ տեղը զբաղեցրել է մէկ այլ կոճակային մոդել՝ Nokia մի փոքր աւելի քիչ ցուցանիշով՝ 248 միլիոն տպաքանակով:

Ամենայայտնի սարքերի եռեակում են նաեւ iPhone 6-ը եւ 6 Plus-ը (222 մլն. միաւոր): Յստակեցւում է, որ այն սկիզբ դրեց մեծ սենսորային էկրանով բջջային հեռախօսների դարաշրջանին եւ մնում է բոլոր ժամանակների ամենավաճառւող սմարթֆոնը:

Հայաստանը՝...

(Շար. 3-րդ էջից)

Միացեալ Թագաւորութեան պաշտպանական արդիւնաբերութեան համար ցանկացած օգուտ պէտք է իրականացւի մանդատային սահմանափակումների շրջանակներում: Մենք կը շարունակենք սերտօրէն աշխատել Հայաստանի հետ՝ աւելի սերտ համագործակցութեան հնարաւորութիւնները բացայայտելու նպատակով»,- ի պատասխան պատգամաւորներից մէկի հարցման՝ նշել էր Ջէյմս Հիպպին:

Ռուս վերլուծաբան Անդրէյ Արեշեւը 168.am-ի հետ զրոյցում ասել է, որ օրէցօր արեւմտեան աւելի շատ ղեկավարներ են սկսում ՀՀ արեւմտեան ինտեգրացիայի թեմային անդրադառնալ, որի նպատակը ՀՀ-ին դէպի Արեւմուտք քայլեր իրականացնելու հարցում ոգեւորելն է եւ Ռուսաստանի հետ դաշնակցային կառոյցներից հրաժարւելուն մղելը:

Ըստ նրա, Հայաստանին ցանկանում են Արեւմուտքից ցոյց տալ, թէ որքան մեծ կոնսոլիդացիա կայ Հայաստանի շուրջ: Սակայն, նրա խօսքով, իրականում այդ կոնսոլիդացիան Ռուսաստանին թուլացնելու համար է, եւ ոչ՝ յանուն Հայաստանի:

«Մեծ Բրիտանիան առաւել ակտիւ աջակցել է մշտապէս ու կաջակցի Ադրբեջանին: Միշտ է այդպէս եղել: Այո, Մեծ Բրիտանիան կաջակցի եւ կոգեւորի Հայաստանին Ռուսաստանից կտրւելու եւ Իրանի հետ յարաբերութիւնները չխորացնելու հարցում: Սակայն ՀՀ-ին իրական աջակցութիւնը ենթադրում է աջակցութիւն ՀՀ անվտանգութեանն Ադրբեջանի դէմ, ռազմական ներուժի զարգացում: Սակայն նոյնիսկ Ֆրանսիան, որն իրեն դիրքաւորում է՝ որպէս ԵՄ-ում ՀՀ-ի ամենասերտ դաշնակից, տրամադրում է որոշ սարքեր եւ յայտարարում առանձնայատուկ կերպով, որ դրանք կրում են բացառապէս պաշտպանական բնոյթ: Իսկ Բրիտանիայի դէպքում սահմանափակող հանգամանքները չափազանց շատ են, Բրիտանիան Ադրբեջանի դաշնակիցն է ու կայ, պատերազմում աջակցել է Ադրբեջանին»,- ասել է Արեշեւը:

Վերլուծաբանի խօսքով, բնականաբար, Իրանի զգուշացումները չափազանց կարեւոր են, դրանք կարեւոր նշանակութիւն ունեն, քանի որ Իրանը փորձում է ՀՀ իշխանութիւններին վերջնական շրջադարձից յետ պահել:

«Այսինքն՝ Իրանի համար սկզբունքայինն այն է, որ չլինի շրջադարձ դէպի Արեւմուտք, չմեծանայ Արեւմուտքի անվտանգային ներկայութիւնը ՀՀ-ում՝ իր հարեւանութիւնում, իսկ Ռուսաստանի հետ յարաբերութիւնների մակարդակը փոփոխելու հարցին, կարծում եմ, Իրանը նորմալ է վերաբերւում: Բայց ՀՀ ակտիւ բանակցութիւններն Արեւմուտքի հետ՝ Իրանին անհանգստացնում է»,- նկատել է Արեշեւը:

Վերլուծաբանը գտնում է, որ իրական անվտանգութիւնը, զսպման մեխանիզմները հէնց ռեգիոնում են, ոչ թէ դրանից դուրս:

«Դրանից դուրս միայն աշխարհաքաղաքական մրցակցութիւնն է, Ռուսաստանին ռեգիոնից դուրս մղելու նպատակը: Առանց այդ ամենի գիտակցութեան՝ քայլերը, բնականաբար, կարող են յանգեցնել անբարենպաստ արդիւնքների: Այնուամենայնիւ այս փուլում, կարծում եմ, կարեւոր դեր է ստանձնել Իրանը եւ մինչ հնարաւոր լուրջ քայլերն Իրանը համապատասխան զգուշացումներն է անում, փոխարէնը՝ ՀՀ-ին առաջարկելով դաշնակցութիւն, որի կենտրոնում՝ անվտանգութիւն եւ զսպման մեխանիզմներ»,- ասել է քաղաքագէտը:

Նրա կարծիքով, Ադրբեջանը եւս կը փորձի օգտւել ստեղծւած իրավիճակից:

«Կարծում եմ՝ Իրանի ուղերձները հաշւի չառնելը կը նշանակի մերժել իրական դաշնակցին եւ գնալ խոստումներ տւողների յետեւից, խոստումներ, որոնց ներքոյ Հայաստանի համար որեւէ լուրջ աջակցութիւն չկայ թաքնւած»,- նկատել է նա:

تبریک

جناب دکتر آرا شاوردیان

موفقیت و انتخاب مجدد جنابعالی در دوازدهمین دوره انتخابات مجلس شورای اسلامی را صمیمانه تبریک عرض نموده و آرزوی سلامتی و توفیق روزافزون را از ایزد منان خواستارم.

محمد سروش
معاون محترم فرهنگی اداره کل مطبوعات و خبرگزاریهای داخلی وزارت فرهنگ و ارشاد اسلامی

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Ջերմօրէն շնորհաւորում ենք

դոկտ. Արա Շահվերդեանին՝

Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր վերընտրուելու կապակցութեամբ:

Ձեր վերընտրուելը այս խիստ պարտաւորեցնող պաշտօնում հաստատում է Ձեր բարձր քաղաքական հեղինակութիւնը: Վստահ ենք, որ շարունակելու էք լաւագոյնս կատարել Ձեզ վստահուած անչափ կարեւոր պարտականութիւնը: Մաղթում ենք Ձեզ քաջառողջութիւն, յաջողութիւններ ու ամենայն բարիք՝ Ձեր պատասխանատու առաքելութեան իրականացման ճանապարհին:

Թ. Հ. Թ. ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶՆԵՐԻ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ, ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ ԵՒ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Այսու ջերմօրէն շնորհաւորում ենք

Արա Շահվերդեանին՝

Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան կողմից պատգամաւոր ընտրուելու առթիւ:

Մաղթում ենք նորանոր յաջողութիւններ եւ ձեռքբերումներ:

Հ. ՌԻՍ. «ՉՇԱՐՄԱՀԱԼ» ՄԻՈՒԹԻՒՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Այսու ջերմօրէն շնորհաւորում ենք

Գեղարդ Մանսուրեանին՝

Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան կողմից պատգամաւոր ընտրուելու առթիւ:

Մաղթում ենք նորանոր յաջողութիւններ եւ ձեռքբերումներ:

Հ. ՌԻՍ. «ՉՇԱՐՄԱՀԱԼ» ՄԻՈՒԹԻՒՆ

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց

յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը

ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,

բացի

մահազդերից,

որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ԱԼԻՔ-ի
Internet-ային էջն է՝
www.alikonline.ir

ԱԼԻՔ
Օրաթերթ
Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵
فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷
چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994
E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼԻԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼԻԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համաձրելու խնդրանքով)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝ 88761154

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր յարգելի

պրն. Արա Շահվերդեան,

սրտանց շնորհաւորում ենք Ձեզ՝

Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան կողմից պատգամաւոր ընտրուելու առթիւ:

Մաղթելով՝ նորանոր յաջողութիւններ եւ ձեռքբերումներ:

«ԱԳԻԱՆՍ ՄԵԴՏՐՈՆԻՔՍ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ

«Նիկոլ....

(Շար. 2-րդ էջից)

Եւ այստեղ մենք արդէն ունենք մի շարք լեգիտիմ հարցեր եթէ Նիկոլ Փաշինեանը իրաւացի է, եւ եթէ Ռուսաստանի Դաշնութիւնը կարող է ստիպել Ադրբեջանին յարձակուել Հայաստանի վրայ (ինչն, ըստ իրեն, դրսեւորուել է 2020, 2021 եւ 2023 թւականների իրադարձութիւններով), արդեօք ճիշտ քաղաքական ռազմավարութիւն է ամբողջութեամբ խզել յարաբերութիւնները Ռուսաստանի հետ: Տրամաբանական չէ՞ ենթադրել, որ եթէ Փաշինեանը իրաւացի է, եւ Ռուսաստանի Դաշնութիւնը Բաքուին ագրեսիայի է հրահրում, ապա ՀԱՊԿ-ից դուրս գալուց յետոյ Մոսկաւն Բաքուին աւելի ակտիւ է մղելու նոր պատերազմի, եւ դա այն իրավիճակում, երբ ՀԱՊԿ-ի ելքը կազատի կազմակերպութիւնը Հայաստանը պաշտպանելու պարտաւորութիւնից:

Փաշինեանը բազմիցս քողարկուած կերպով կրկնել է այն միտքը, որ Ռուսաստանը (որին նա այս անգամ անուանեց «օտար ուժ») փորձում է Հայաստանում իշխանութիւն փոխել եւ իրեն հեռացնել իր պաշտօնից: Քաղաքական շահարկումն էլ պէտք է սահման ունենայ ու Նիկոլ Փաշինեանը լաւ գիտի, որ հաւանականութեան շատ բարձր աստիճանով 2021-ին նա վարչապետ չէր դառնայ, եթէ 2020-ի նոյեմբերին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն իր յայտնի հարցազրոյցում չյայտարարէր, որ «Փաշինեանը դաւաճան չէ»:

Փաշինեանը շատ լաւ գիտի, որ հաւանականութեան շատ բարձր աստիճանով ինքը վարչապետ չէր դառնայ 2021-ին, եթէ ընտրութիւնների ժամանակ չլինէր Փաշինեանի նկատմամբ Կրեմլի որոշ աշտարակների լոյալ վերաբերմունքը: Նիկոլ Փաշինեանը հիանալի հասկանում է այս ամէնը, բայց երախտագիտութեան փոխարէն Ռուսաստանին է մեղադրում նոյնիսկ 1915 թւականի Հայոց Ցեղասպանութեան մէջ…

Մտածէ՛ք այդ մասին…»:

ՊԱՐՍԻՑ ԾՈՑ....

(Շար. 1-ին էջից)

Հրապարակման համաձայն՝ ՄԱԿ-ի աշխարհագրական անուանումների փորձագէտների No 66 տեղեկագրում Պարսից ծոցի փոխարէն նշուել է շինծու եւ պատմական որեւէ արժէք չներկայացնող անուն:

Այս մասին է տեղեկացրել «Երկրի (Իրանի) բիւջետային եւ նախագծերի հաշուարկման կազմակերպութեան» հասարակայնութեան հետ կապերի կենտրոնը, վկայակոչելով Իրանի «Գէոդեզիայի եւ քարտէզագրութեան» կազմակերպութեան հրապարակումը:

Նոյն կապակցութեամբ, Իրանը ՄԱԿ-ի համապատասխան յանձնակատարին ներկայացրել է թիւ 66 տեղեկագրում փոփոխութիւն մտցնելու եւ սրբագրելու պահանջ:

Աղբիւրը յաւելել է, որ Իրանի առարկութիւնից յետոյ քարտուղարութիւնը (ՄԱԿ-ի) նամակ է ուղարկել Օմանի միապետութեան ազգային Քարտէզագրութեան կազմակերպութեանը: Վերջինս էլ հետեւելով ՄԱԿ-ի պահանջին Պարսից ծոց անուանումով է փոխարինում թիւ 66 բուլետենում խեղուած բառակապակցութիւնը:

Իրանի յղած նամակում յստակօրէն նշուած է, որ Պարսից ծոց պատմական անուան փաստաթղթաւորման օրինականութեան եւ ճշգրտման, ինչպէս նաեւ ՄԱԿ-ի կողմից հաստատուած մօտեցումների համաձայն, կասկած չկայ որ Պարսից ծոցի ճիշտ եւ ամբողջական անուանումը միակ եւ անհերքելի ստանդարտ ձեւակերպումն է Իրանի եւ Արաբական թերակղզու միջեւ ընկած ջրերն անուանելու համար:

«Երկրի (Իրանի) Ազգային քարտէզագրման եւ տեղանունների ճշտորոշման կազմակերպութեանը» կից Իրանի աշխարհագրական անուանումների մասնագիտացած կոմիտէի ներկայացրած պաշտօնական բողոքագրում մասնաւորապէս նշուած է. «Կոչ ենք անում UNGEGN կայքում փոփոխել (Պարսից ծոցի փոխարէն) կեղծուած տարբերակը՝ նման կեղծիքների ընթացակարգը բուկլետում կանխելու համար: Բուլետենի կարեւորութիւնը նրանում է, որ աշխարհագրական անուանումների հետ կապուած տարբեր ոլորտներում երկրների հիմնական գործունէութիւնն է ի ցոյց դրւում: Հանդէսը գէոդեզիայի նեղ մասնագէտների ներկայութեամբ է, որ պէտք է պատրաստի: Հետեւաբար, ակնկալւում է, որ աշխարհագրական անուանումները ճիշտ օգտագործուեն ամսագրի հաշուետուութիւններում ու յօդուածներում: Յաւոք, վերջերս Օմանում հրապարակուած թիւ 66-րդ Բուլետենի 58-րդ էջում Պարսից ծոցի պատմականօրէն հաստատուած անուան փոխարէն այլ բան է նշուել»:

UNGEGN-ի քարտուղարութիւնը այս կապակցութեամբ շնորհակալութիւն է յայտնել Իրանի «Գէոդեզիայի եւ քարտէզագրման կազմակերպութեանը, որտեղ մասնաւորապէս նշուած է. «Մենք ողջունում ենք Իրանի կազմակերպութիւնների մասնագիտական աջակցութիւնը առաջիկայ բուկլետներում»,-յաւելել է Իրանի «Գէոդեզիայի եւ քարտէզագրութեան» կազմակերպութեան հասարակայնութեան հետ կապերի վարչութիւնը:

ՄԱԿ-ի Bulletin 67-ի առաջիկայ թողարկումը նախատեսուած է իրականացնել 2024 թւականի մայիսին, որը կենտրոնացած է լինելու «Կառուցողական փորձառութիւններն ազգային քարտէզագրման եւ աշխարհագրական անուանումների կազմակերպութիւնների համագործակցութեան արդիւնք են» խորագրի շուրջ:

ՈՒԵԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց

յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը

ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,

բացի

մահազդերից,

որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու մեր թեմի սիրելի ժողովրդի զաւակներին եւ յատկապէս Զէյթուն քաղաքամասի մեր սիրելի ժողովրդին յայտնում ենք, որ 2024 թ. շաբաթ, մարտի 16-ին **Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, յիշատակ չարչարանացն եւ մտանելոյն ի վիրապն** տօնն է. այս տօնը համընկնում է համանուն եկեղեցու անւանակոչութեան տօնին, այս առիթով նախագահութեամբ թեմիս բարեխնամ առաջնորդ՝

ԳԵՐԾ. Տ. ՍԵՊՈՒՀ Ս. ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

շաբաթ, մարտի 16-ին 2024 թ. Զէյթուն քաղաքամասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում մատուցելու է հանդիսաւոր ս. պատարագ:

Սկիզբ ժամերգութեան	ժամը 9:00-ին
Ս. եւ անմահ պատարագ	ժամը 10:00-ին
Քարոզ	ժամը 11:00-ին

Յաւարտ ս. պատարագի տեղի է ունենալու հոգեհանգստեան յատուկ արարողութիւն եկեղեցու բարերար հանգուցեալ՝ Գրիգոր Մելիքեանի եւ Մելիքեան գերդաստանի ննջեցեալների հոգիների խաղաղութեան համար:

Սիրով մեր հաւատացեալ ժողովրդին հրաւիրում ենք, որ մասնակցեն յիշեալ հոգեպարար արարողութեանց եւ հաղորդուեն մեր հաւատոյ հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի հաւատքի կեանքի խորհրդով:

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԹԵՇՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան

ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ

IRAN AIRTOUR AIRLINES — Qeshm Air

برای تهیه بلیط می توانید با

شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی

۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com

و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹

و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.

«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

آژانس مسافرتی «بازه»

BAZE TOUR & TRAVEL AGENCY

Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան

Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824

نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+

Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

Արթուր Խաչատրեան.

«Եթէ Տաւուշի հատուածից զիջումներ արւեն, Հայաստանի ամբողջ հիւսիս-արեւելքը խոցելի է լինելու»

«Ինչպէս ադրբեջանական բոլոր պահանջների, այնպէս էլ այս պահանջի առջեւ Փաշինեանն ընկրկելու է»,-ԱԺ-ում լրագրողների հետ զրոյցում ասել է «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արթուր Խաչատրեանը՝ անդրադառնալով Տաւուշի հատուածից զիջումներ անելու մասին Փաշինեանի մարտի 12-ի յայտարարութեանը:

«Դրանք ռազմավարական նշանակութեան տարածք են»,-ասում է Արթուր Խաչատրեանը՝ ընդգծելով, որ դրա հետեւանքով Հայաստանի ամբողջ հիւսիս-արեւելքը խոցելի է լինելու:

Ըստ Արթուր Խաչատրեանի՝ նախ 4 գիւղը կուզեն, յետոյ այլ գիւղեր, կասեն ՀՀ -ի եւ Ադրբեջանի միջեւ սահմանը սահմանազատած չէ, ով ասաց, որ այս բարձունքը պատկանում է Հայաստանին: «Նոյն պատճառաբանութիւնը կը բերեն, ինչը ներկայացրեցին Ջերմուկի հատուածում 150 քկմ. օկուպացնելու ժամանակ: Ի՞նչ ասեց Ալիեւը, ասաց, եթէ սա ձեր տարածքն է, ապա սահմանը կահաւորուած կը լինէր, եթէ կահաւորուած չի ո՞վ ասեց, որ ձեր տարածքն է»,- յիշեցրել է Արթուր Խաչատրեանը:

«Տաւուշի այդ հատուածով անցնում է Վրաստան գնացող ճանապարհը, որը յայտնւելու է ադրբեջանական թիրախում: Դա Ադրբեջանի համար բարձունք է, ճանապարհ է, ենթակառուցուածք է: Բոլոր մխրճումները ռազմավարական նշանակութիւն ունեցող կէտերում են, բարձունքներն են, որոնք վերահսկում են ճանապարհները ու շատ հեշտ է Հայաստանի հարաւը հիւսիսից կտրելու համար»,- ասաց Արթուր Խաչատրեանը՝ յաւելելով, որ դա Սովետական Միութեան յանցաւոր քաղաքականութեան դրսեւորումներից է, երբ Երեւանից Թբիլիսի գնալու համար Ղազախի շրջանով էինք անցնում:

«Փաշինեանը միակ հայն է, որ բոլշեւիկների գծած սահմանը պատրաստ է մարմնով պաշտպանել»:

Yerkir.am

SET Coffee

فروشگاه: هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰

کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار بیوتکنولوژی، پلاک A117

0936-6726563

021-88305827

www.set-coffee.com

قهوه ست

املاک هنرمندان

● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)

● خانه های قدیمی تخصص ماست

آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴

تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷

واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰

مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴

مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

ՔԱՐԻՄԻ

Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ

خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی، مبلمان، خرده ریز و لوازم آنتیک

Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

«Արարատ»

Ամէն տեսակ տնային իրերի գնորդ

سماور ذغالی، نقره جات، ظروف مسی، چراغ لاله و لوستر، رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ، لوازم چوبی آنتیک و خرده

Հեռ.՝ 88523388

«Սա միայն....

(Շար. 2-րդ էջից)

Զուտ քաղաքաշինական իմաստով արդէն իսկ մայրաքաղաքի կոնկրետ հատուածում, Թամանեանի յղացմամբ ԵՊՀ-ի շուրջը տեղակայուած ԲՈՒՀ-երը կառուցած են հէնց այդ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ քաղաքի կամ կլաստրի փիլիսոփայութեամբ:

Հիմա կոնսերւատորիայի շուրջն է ընդվզումը, բայց ապականում եւ կազմաքանդում է ողջ կրթական եւ ակադեմիական-գիտական համակարգը, տասնամեակների վաստակը, ժառանգութիւնը:

Ու ստել, ստել, ամբարոյականի վերջին վարքով ստել:

Հանրութեանը կանգնեցնել փաստի առաջ, յետոյ ասել, թէ քննարկելու ենք: Յետոյ՝ ասել, թէ սա է ու վերջ: Յիշէք պատմութեան դասագիրքն ու նախարարի պահւածքը:

Ոտքի կանգել, յաղթահարել նւաստացումները, վախերը, ամբիցիաները, անձնական նեղ շահերը, թշնամին արդէն վաղուց մեր տանն է. ուշքի եկէք:

Սա միայն կոնսերւատորիայի խնդիրը չէ: Իրականում, ազգային կրթական համակարգի հակառակորդները Երկրի եւ հայ մարդու բովանդակութիւնն են աղճատում, փոխում:

Մեզանից երկիր ու հայրենիք են օտարում. պատերազմը նաեւ ներսում է:

Մենք առանձին-առանձին պարտւում ենք, դեռ պարտւում ենք...թոյլ մի տւէք, որ մանկուրտացնեն մեզ»:

Yerkir.am

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանքով)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16

Հեռ.՝88761154

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ